

„Droschak”  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

PHOTOGRAPHY  
A. P. B. B. B. B. B.  
LIBRARY  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak”  
GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ԳՈՂԹԱՆԻ ԶԱԻԱԿ — ՄՇՈՅ ՄԱՏԱՂ

#### Գ Ո Ւ Ր Գ Է Ն

ԲԱՂՂԱՍՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԷՍՄԱՌՈՑ ԳԺԵՐ)

Նոր-Բայազետեան գնդի զինուոր էր Գուրգէնը, բայց Տայրենիքի դժբախտութիւնը թոյլ չտուեց երկար շարունակել պ ա չ ա ն ա կ ա ն զինավարժութիւնը:

1894-95 թւի Տայկական կոտորածները վերադառնալիս նրա հանդստութիւնը: Արեւի ծարաւը այրում, խորովում էր նրա զգայուն սիրտը: Եւ ահա երբ 1896 թւին լսեց Արեւստանի Գաշնակցական Կեդրոնական Կոմիտէի յեղափոխական կոչը՝ նա պայթեց. «Էլ ո՞ր օրւայ համար պիտի գործէ հրացանս, երբ Մեծ Մարդասպանը կըրակի ու արեան ծով է դարձրել Մայր-Հայաստանը»: Այդ գզգզմունքով վառւած՝ սուս ու փուս ծ լ կ ե ց Գուրգէնը զօրքի շարքերից և մի քանի կամաւոր ընկերներով ներկայացաւ «Արեւի» կազմաբազմին:

Իր սակաւախօս բնավորութեամբ, վտանգաւոր գործերում ցոյց տուած անվեհերութեամբ՝ նա շուտով ընկերների սիրելին դարձաւ: 1896 թւի սեպտեմբերին Բոլզարացու անվեհեր խմբի հետ անվտանգ մտաւ Վան (տես «Իրօշակ», № 28, 1896): Այնտեղից՝ քաջաբար կուրծով խուճրը անցաւ Հայոց Չոր, ուր «Կիմամարագի» յայտնի կուրծից նոյնպէս անտանգ ազատելով վերադարձաւ «Արեւի» շրջանը:

1896 թւի ծրագրած արշաւանքը զանազան հանամանքներից չիրազորուեց և յետաձգեց յետագայ տարւան: Հետեւապէս կամաւորները պիտի ցրուին: Ար-



ԲԱՂՂԱՍՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ — BAGDASSAR MALIAN tué à Mouche.

հետ իմացողները — կազմակերպութեանը ծախք չպատճառելու համար — զբաղեցան արհեստներով: Գուրգէնը արհեստ չունէր, բայց սրտիցը չէր տալիս հեռանալ թէև ժամանակաւորապէս, գործող ընկերներից, — և նա ստանձնում է խ ո ճ ա Ր ա Ր ի պաշտօն կազմակերպութեան ղեկավարների բնակարանում: Ընկերների այսպիսի նկատողութիւններին թէ «Գուրգէն, ախր ինչու ես մեզ ամաչացնում քո աբդ դերով» — պատասխանում էր. «Դաշնակցութեան սկզբունքով՝ աշխատանքի հաւասարութիւն պէտք է լինի մեր մէջ. ես առայժմ կարող եմ օգնել ձեզ իմ այս աշխատանքով»: Ազուլեցիներին յատուկ խնայողութեամբ (նա ծնած էր Վերին-Ազուլիս, 1873 թւին) սնտեսութիւնը ծայրայեղութեան էր հասցրել: Մի քանի ամաւայ արած ծախքերը, 1/2 և 1/4 կօպէկներով գրւած հաշիւները մինչև այժմ անսովոր ճշտապահութեան և խնայողութեան օրինակներ են մնում մեր ընկերների շրջանում: Իր «խոհարարութիւնից» յետոյ՝ 1897 թւի յունվարի 25-ին Գուրգէնը վերադարձաւ Կովկաս, որպէսզի անձամբ պատմի Կովկասի ընկերներին յեղափոխական կեանքի քաղցրութիւնը: Գարունը բացւելուն պէս, նա՝ արդէն կատարած իր միսիան, նորից յայտնեց «Արեւի»-ում՝ նոր ընկերներով, դրամական նպաստով և ուղղամտերի առատ պաշարով: Նա «սիրող» չէր, այլ մարմ-

նացած յեղափոխական կառույց ուստի չէր կարող գործից հեռու մնալ, երկրից դուրս ապրել...

Այդ պատմական րոպէում՝ Մ... թը կատարեալ զինուորական բանակատեղի էր նմանում. կամաւորների խումբ-խումբ ժողովները հեռաւոր տեղերից, նրանց կանոնաւոր հրացանաձգութեան վարժութիւնները, զինուորական արհեստանոցների անընդհատ աշխատանքը և մատակարարման կանոնաւորութիւնը — այդ բոլորը ա-

ունձին ջանք և հոգատարութիւն էր պահանջուած Ամեն  
ոք իր մասնագիտութեամբ պէտք է օգնէր ընդհանուր  
գործին: Գուրգէնը ևս ունէր իր պարտականութիւնները.  
Նա էր մատակարարում ամբողջ արշաւային ռազմա-  
կան հագուստը, նրան էր յանձնուած նաև 50 կամաւոր-  
ների կերակրելն ու զինւորական վարժութիւնները: Օրի-  
նակելի էին նրա զինւորական վարժութիւնները՝ հա-  
կա կան բարբառով:

Դեռ առաջուց վճռած ընկելով երկրի մէջ գործել  
Գուրգէնը էլ համբերութիւն չուներ սպասել և  
97 թւի արշաւանութիւն միանալ: Արշաւանացի մի շա-  
բաթ առաջ Ասպուրական մեկնող Տերոյեանի քաջա-  
մարտիկ խմբի 30 կամաւորներից մէկը պաշտելի Գուր-  
գէնն էր: Տակաւին հնչում են շատերիս ակնաքններին  
նրա հրաժեշտի ներկական խօսքերը — «Պէ՛տքը, ց տեսու-  
թիւն եմ ասում միայն. կը գաք երկիր և մենք այն-  
տեղ հայրենիքում, կը տեսնենք»...

Անի լճի արևելեան մասում՝ Գուրգէնը 10 ընկեր-  
ներով բաժանելով Տերոյեանից, ապահով անցնում  
է Բաղէշ և միանում Սերոբի, Աւրակաւանի և միւսների  
հետ: Այդ ժամանակ մի քանի տեղիկագիր-նամակնե-  
րով նկարագրեց երկրի վիճակը: «Նա գրում էր, յժո-  
ղովորդը այլևս չէ վախճում մեռնելուց, դանակը ոս-  
կորին է հասել. եղած-չեղածը պարտատ է զենքի

տալ և տալիս է, սակայն այստեղ բաւարար քան-  
կութեամբ զենք չէ ձարվում. զէ՛նք, զէ՛նք հաս-  
ցրէք»: Այդ ոգևոյժ էլ նա գործում էր, պատելով մինչև իր  
մահը, այն է մինչև 1899 թիւը Մուշի, Բաղէշի և  
\*\*\* շրջաններում, ուր նա թողեց անմուսնալի հետքեր,  
առաջնակարգ կազմակերպող յեղափոխականի փայլուն  
անուն:

Գուրգէնի համար շատ պարզ էր, որ երկրի մէջ յե-  
ղափոխականի կեանքը շատ էլ երկար չէ տևում, շնոր-  
հիւ սուլթանի ծառայ. հայ մատնի ի չն երի: Տեռո-  
րիսաների ձեռքերը յոգնեցին, բայց դաւաճանները չվեր-  
ջացան, չխրատուեցան: Մասնիչի համար ի՛նչ արժէք ունէր  
այդ թանկագին կեանքը... Եւ ահա 99-ի ապրիլի  
24-ին Մուշի ծրօնք զիւղի մէջ, դարձեալ մարագի հե-  
րոսական կուկից յետոյ — տեսնում ենք արդէն Գուր-  
գէնի նահատակումը, 26 տարեկան հասակում... 1):

Անմուսաց անունիդ, անքար դերեզմանիդ մատաղ  
թանկագին ընկեր: Հերոսաբար պարտքդ կատարելով՝  
մաւրաղիդ հասար, դու՛ Գողթանի հարազատ դաւակ:  
Ընկար հրացանը ձեռքիդ՝ թշնամիներիդ կոտորելով: Բախ-  
տաւոր է Գողթանը քեզ պէս հարազատին մատաղ  
բերելով՝ Մշոյ սեղանին — Ազատութեան Սուրբ Գործին:

1) Տես «Դրօշակ» №№ 6 և 8, 1899:

**Գ Ո Ւ Ր Գ Է Ն Ի Ա Ն Մ Ա Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն**

(1899 ԱՊՐԻԼ — 1900 ԱՊՐԻԼի ՏԱՐԵԿԱՐՁՈՒՄ)

Քրդերւալով ջուր է իջնում  
Մշու մշու սարերէն.  
Ծիծեռները ծիւծիւ եկան  
Գարնան գալը երգելէն:

Գարուն չկայ հայի համար,  
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.  
Գերեզմանս հողին հաւաք,  
Թող փուշ բուսնի իմ՝ վրէն...

Գնա, ծիծեռ... Թող ինձ մէնակ  
Վէրքը սրտիս՝ հողի տակ...

Բայց երբ տեսնես թշնամու դէմ  
Հայ ժողովուրդ սարի պէս  
Ձէնքը ձեռին հպարտ կանգնած,  
Հայեր, լեռներ իրար պէս —

Ախ, այն օրը արի, ծըւա՛,  
Գարնան գալը նոր կանչէ: —  
Հայոց գարնան, որ բիւր բարև  
Սիրտս խորէն ղողանջէ...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

**ԱՄԲՈՒՆԵՆ ՏՐԱՄԲԱՆՈՒԹԻՒՆ**

V

Նախորդ յօդուածների շարքում մենք բաւական խօսել  
ենք կոտորածների պատճառ ու առիթների մասին:  
Աւելացնենք մեր ասածների վրայ և այն, որ եթէ հայերին  
կոտորելու համար սուլթանը միակ արգելք տեսնէր  
առիթների պակասութեան մէջ, նա ինքը շատ հեշ-  
տութեամբ կարող էր ստեղծել այդպիսիք՝ իր իմացած  
ձևով և կատարելապէս համաձայն տեղին ու հանգա-  
մանքներին... Այս բոլորից հետևում է ուրեմն, որ  
յեղափոխական գործնական ընթացքը քննադատելիս  
պէտք է իսկապէս յեղափոխական ճանաչած ձեռնար-  
կութիւնները գնահատեն կոտորածներից դուրս, այսինքն  
այն եղանակով, ինչ եղանակով մենք քննեցինք այդ  
ընթացքը նախորդ յօդուածում: Աւրիշ տեսակ վարելի՛  
կը նշանակէր պարզապէս հերքել շատ ակներև ճշ-  
մարտութիւններ և իվերջոյ՝ նոյնիսկ մեր շարժման  
իրաւունքը: Սակայն այդպէս չէ նայում իրերին ամ-  
բոխային տրամաբանութիւնը. նա կարելի է համարում  
իր ասպետների բերանում այնպիսի խօսքեր դնել, ինչ-  
պիսիք մենք բերինք անցեալ անգամ, այն է՝ «յեղափո-  
խական անցեալում շատ բան չէր համապատասխանում  
ժամանակի բաղադրական հանգամանքներին, չկար  
անհրաժեշտ նախապատրաստութիւն և ժո-  
ղովրդի կազմակերպչականութիւն, չկար գործի  
մէջ սառն դատողութիւն»:

Ի՞նչ է նշանակում «շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին»:

Երբ 1878 թվին Խրիմեան արքեպիսկոպոստը վերադարձաւ Բերլինի Վեհաժողովից՝ նա ասում էր իրեն դիմողներին մտաւարապէս հետեւելով.

«Հայերս ոչինչ չստացանք: Այնտեղ ապուրը ուտում էին երկաթեայ գոլաներով, իսկ մենք ունէինք միայն թղթէ գալ»:

Այսպէս էր խօսում Խրիմեանի բերանով Բերլին գնացած պատգամաւորութիւնը. այդ խօսքերում էին ամփոփուում այն ապաւորութիւնները, որ ստացել էր հայ պատգամաւորութիւնը Բերլինում և Եւրոպայի առաջնակարգ քաղաքագէտների հետ շփուելուց յետոյ: Պէտք է կուսել — ահա այդ խօսքերի իմաստը:

Այնուհետև 1879 թվի յունիսի 12-ին Պօլսի անգլիական դեսպան Լէյարդը հեռագրում էր նախարար Սոլբիերին.

«Եթէ Բարձր Դուռը չզգուշանայ, եթէ նա չգործէ հեռատեսութեամբ եւ խելքով, Ասիայում մի գեղեցիկ օր կը ծագի հայկական հարց, ինչպէս Եւրոպայում ծագեց բուլղարական հարցը, որ պատճառ եղաւ վերջին պատերազմի»:

Եւ գէնը՝ այդ երկար հեռագրի բովանդակութիւնից երևում է, որ յիշեալ «գեղեցիկ օրը» կը լինի այն ժամը, երբ կ'արտայայտուի երկրում հայկական դատի առթիւ ունէ շարժում:

1880 թվի յունիսի 11-ին վեց մեծ պետութիւններին մի համանման նօտան արտաքին գործերի նախարար Աբեղին-փաշային՝ վերջանում էր այս խօսքերով.

«Պարտք ենք համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրել դէպի այն լուրջ պատասխանատուութիւնը, որ իր վրայ է վերցնում Բարձրագոյն Դուռը, ուշացնելով այն միջոցների իրագործումը (61-րդ յօդուածի պահանջները), որ պետութիւնները անհրաժեշտ են համարում ինչպէս տաճկական կայսրութեան, նոյնպէս եւ ամբողջ Եւրոպայի շահերի համար»:

Չենք երկարացնում: «Վապոյտ գրքերից» պատահական կերպով վերցրած այս կտորները ցոյց են տալիս, որ պետութիւնները բացարձակապէս աշխատում էին հայկական ունէ շարժման տեղիք չտալ գանելով, որ դասպառնում է բուլղարական հարց դառնալ և առաջ բերել այնպիսի միջամտութիւններ յօգուտ հայերի, որոնք նոյնիսկ կարող էին պատերազմի տեղիք տալ: Եւ երևի այդպիսի վտանգներից խուսափելով էր, որ այնուհետև համարեա ամբողջ 80-ական թւականների ընթացքում եւրոպական պետութիւնները նպաստեցին Թիւրքիային՝ հայկական հարցը մուսուլման մատնելու համար:

Հարցնում ենք ուրեմն, յեղափոխականների ընթացքը համապատասխանում էր քաղաքական հանգամանքներին՞ թէ՞ ոչ: Ի՞նչ կարող էր մեզ համար

աւելի ձեռն տո՛ւ լինել քան մեր հարցի բուլղարական հարց դառնալը և ինչ Եւրոպայի վիճակները արդեօք չէ՞ն ապացուցանում, որ միայն յայտնի օրական շարժման հարեւոյնը պէտք է ստիպէին հերթական խնդիր դարձնել մեր բազմաչարճար դատը: Եւ որպէսզի ունէ սխալանքի մէջ չ'ընկնենք, թողնենք այս հարցերին պատասխանի «ժամանակի»

յայտնի քաղաքագէտներից մէկը: 1890 թվին, այսինքն հայկական հարցի համարեա 10-ամեայ մուսուլմանից յետոյ՝ աւստրիական միսիստր Վալթօլին, խօսելով հայերի պահանջների մասին, բացարձակապէս յայտարարեց.

«Եւրոպայ չկայ, եւ մինչև որ հայկական հողը չչաղախուի արիւնով, թող գիտեան հայերը, որ ոչինչ չեն ստանայ»:

Ի՞նչ էին նշանակուս այս խօսքերը, եթէ ոչ Եւրոպայ չկայ, բայց նա կը լինի, երբ հայերը բացարձակ կուսել ճանապարհը կընտրեն իրենց պահանջների համար:

Եթէ յիշում է ընթացողը, Բօլէն-Թակմէնը ևս, 1889 թվին վերլուծելով եւրոպական գիւտանագիտութեան ընթացքը հայկական հարցում, գալիս է այն եզրակացութեան, որ Եւրոպան անտարբեր դունեց դէպի հայերը որովհետև հայերը չէին ապստամբել:

Վրկնում ենք ուրեմն. համապատասխանում էր յեղափոխականների բռնած գիրքը «ժամանակի քաղաքական պահանջներին» թէ՞ ոչ: Խնդիրը այդպիսով՝ քաղաքական պայմանները արհամարելու չէր — սովորական մեղադրանք յեղափոխականների հասցէին, — այլ այդ քաղաքականութեան վրայ ազդելու միջոցներն էր:

Թող չ'ասեն մեզ թէ այն, ինչ նպատակաշարժար էր, օրինակ, այս ինչ թւականին, կարող էր վնասակար լինել յետագայ թւականներին և ինչ: Հասարակական մի հոսանք, որ հող ունի կեանքում, չէ կարող առաջ չգալ, իսկ առաջ գալով՝ չէ կարող չզարգանալ և կամ շեղուել իր ընթացքից, ինչպէս ջուրը նօրմալ պայմաններում չէ կարող չհոսալ, երբ նրա առաջ բացուում է ճանապարհ: Գործածելով հռչակաւոր Վասսալի խօսքերը, դա «իր կաթեայ անհրաժեշտութիւն» է, որ պայմանաւորում է որոշ հասարակական ուժերի փոխադարձ յարաբերութիւններով: Երկուսից մէկը ուրեմն, կամ յեղափոխական շարժումը համապատասխանում էր ժամանակի «քաղաքական պահանջներին» կամ ոչ: Եւ եթէ համապատասխանում էր, ուրեմն՝ յեղափոխական ձեռնարկները սիստեմատիկաբար պէտք է շարունակէին, քանի չէր ապահովւած Եւրոպայի իրական միջամտութիւնը: Այս, այդ էր պահանջում ժողովրդի դրութիւնը, այդ էին մեզ թելադրում և ուրիշ ազգերի օրինակները: Եւ երբ մեզ ասում են, որ յեղափոխական ձեռնարկները եղան կոտորածների առթիւ կամ պատճառ, մենք չենք հաւատում դրան, այլ արեւելեան

Հարցին ծանօթ հեղինակներից շատերի հետ միասին մեռւմ ենք այն համոզման, որ դա հեռուանք էր որքան զարհուրելի, նոյնքան և անմիտ, որքան դժբախտ, նոյնքան և անձոռնի, անօրմալ քաղաքական խաղերի, — խաղերի, որոնց բացառիկ այլանդակութիւնը հասկանալու համար՝ պէտք է ինկատի ունենալ այն սոսկալի, այն հրեշաւոր անհեթեթութիւնները, որոնք ուղեկցում են երևոյթը:

Մի կողմ թողնելով հեռուաւոր անցեալը, յիշենք, որ ռուս-տաճկական պատերազմից յետոյ Ռուսաստանը, այս կամ այն դիտումներով, միշտ պաշտպանում էր հայոց հարցը. նոյն կառավարութիւնը 94 թւի Սասունի մասնաժողովում ունէր իր ներկայացուցիչը, դրանից յետոյ նա մասնակցում էր բարենորոգումների ծրագրի մշակման: Աւելի բնական ոչինչ չէր կարելի երևակայել քան՝ որ նոյն կառավարութիւնը, թէկուզ միայն իրեն յարգելով, անէր այնուհետ և հետևեալ քայլը — պահանջեր ուժօրման գործադրութիւնը: Այսպէս էր նայում փաստին ամբողջ աշխարհը. այդպէս վերաբերեց մայրենան ծրագրին և ամբողջ հայութիւնը: Բայց ահա այլանդակութիւնը: Այս բոլորի հետ միաժամանակ Լօբանօվի «ռուս» երևակայութեան մէջ օրէօր աւելի և աւելի դօրեղ նւաճումներ է սկսում անել այնպիսի մի անհեթեթութիւն, թէ հայկական բարենորոգումների խնդիրը «կարող է ստեղծել սահմանակից մի նոր Բուլղարիա Ռուսաստանի համար»: Ինչօ՞ւ. — արդհետև հայերի դրութիւնը մի փոքր պէտք է բարեփոխուի, այսինքն՝ նրանք պէտք է այնպիսի պայմաններում գրեն, որ աւելի պակաս անպատեն, թաւանեն և կոտորեն, կարծես՝ ռուսական բոլոր սահմաններում տաճկահայերից լաւապրող՝ և քիւրդերից ու թիւրքերից չմոթեալ չլիալանուող փոքրիկ ազգութիւնները մի-մի Բուլղարիաներ են Ռուսաստանի համար, կամ կարծես սուլթան Համիդի ստորագրած բարեփոխումները աւելի լայն էին քան սուլթան Մէջլիսի Խատաի-Հիւսայունում խոստացած կարգերը, որոնց գործադրութիւնը ոչ մի կառավարութիւն երբեք այնպիսի խստութեամբ չէր պահանջում Թիւրքիայից, ինչպէս 1856 թւականից սկսած այդ անում էր Ռուսաստանը:

Նայենք և Ալբիոնին: Այն Սոլիքիւրին, որ 1879 թւին — տեսնելով որ Բերլինի դաշնագրի միւս կէտերը մեծ մասամբ իրագործւած են բացի Անգլիայի «առանձին երաշխաւորութեան» տակ վերցրած Փոքր-Ասիայի վերաբերեալ յօդւածը — հարկաւոր համարեց Չմիււնիայի ծոցում մինչևիսկ ծովային ցոյց անելու Թիւրքիայի դէմ, — այդ նոյն Սոլիքիւրին 96 թւին իր կառավարութեան բացարձակ դաւաճանութիւնը արդարացնելու համար ապացուցանում էր թէ «Տաւրոս լեռները անմատչելի են» անգլիական նաւատորմի համար: Ո՞վ քան լորդ Սոլիքիւրին, աւելի լաւ գիտէ, որ աշխարհիս երեսին չկայ ոչ մի ուրիշ պետութիւն, որի ծովային

սահմանները պաշարել կամ գրաւելը, մի խօսքով որին վնասելը այնքան դիւրին լինէր, ինչպէս Թիւրքիային, որ ոչ մի նաւատորմ չունի: Թող չ'ասեն մեզ, որ Ռուսաստանի ընդդիմադրութիւնը պատերազմի վտանգ էր առաջ բերում Անգլիայի համար. 1895 թւի օգոստոսի 28-ին Պետերբուրգի անգլիական դեսպանից և նոյն օգոստոսի 29-ին Պոլսի դեսպանից ստացւած հեռագիրները հաղորդում էին անգլիական կառավարութեան, որ Լօբանօվը իր կողմից կարելի զիջումների շարքն է դասում նաև «համաձայնութիւն թողնել Անգլիային և Տաճկաստանին դէմ առ դէմ»<sup>1)</sup>: Այս չտեսնւած անհեթեթութիւնների տիպարը սակայն ներկայացնում է լորդ Ռօզբերի: Այդ թեթեւամտ, բայց ջղային եսամոլութեամբ բռնւած լորդը Գլադստօնի Վիլպօլում յօգուտ հայերի արտասանած ճառից յետոյ դուրս է գալիս նոյնմբեր ամսին Էդինբուրգում խօսելու և բացարձակ դաւաճանութեան այնպիսի մի քայլ է անում, որ անպատեն էր ոչ միայն կողմնակի դիտողների համար, այլև նոյնիսկ իր ամէնամօտիկ և ամէնաթափանցող քաղաքագէտ-բարեկամների համար. նա հրաժարում է անգլիական ազատամիտ կուսակցութեան ղեկավարի դերից, ասելով, որ Գլադստօնը և ազատամիտ կուսակցութիւնը պահանջելով պահպանողական կառավարութիւնից ունէ վճռական քայլ անել յօգուտ հայերի, իր թէ սխալ ընթացք են բռնում: Բայց լորդի դաւաճանութիւնը չէ վերջանում Գլադստօնով իր բոլոր կուսակիցներով և հայերով: Լորդը միևնոյն ժառուղի դաւաճանում է և ինքն իրեն: Այդ ճառից ընդամենը 8 ամիս առաջ այն է 1896 մարտի 3-ին, իր արտասանած մի ուրիշ ճառի մէջ նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից շատ անգամ աւելին՝ քան այդ արեց Գլադստօնը իր վերին աստիճանի զգոյշ ճառի մէջ: Նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից, թէկուզ առանց միւս պետութիւնների համաձայնութեան, մե՛ն ա կ գ ո թ ի գ ի մ ե լ յօգուտ հայերի և նոյնիսկ պարզ ախարհում էր, որ այդ առանձին գործողութիւնը կարող է արտայայտել ունէ տաճկական նաւահանգստի պաշարումով<sup>2)</sup>:

Անգլո-ռուսական հակամարտութիւնն թուրքաւորւած հրեշաւոր կասկածների ուրաւականներով — հա այն սոսկալի հողը, ուր մեր բախտը որոշելու հրաւիրւած «քաղաքագէտները» կորցրին ոչ միայն իրենց խիղճ և ամօթը, որ չեն էլ ուզում ունենալ այլև իրենց խելք ու դատելու ընդունակութիւնները: Նայէք, ինչ էր գրում Պոլսի անգլիական դեսպանը իր կառավարութեան 1879 թւին.

«Բուլղարական միւլնոյն ի ն տրի գ ն երը այժմ կատարւում են Փոքր-Ասիայում թէ այն նպատակով, որ վերականգնեն հայկական ազգութիւնը եւ թէ նրա

1) *Sou Turkey*, N° 1, 1896.  
 2) «Մուլթան եւ պետութիւններ» Մակկոլի.



Հանան զարկեց և փախաւ Կառավարութիւնը, մարդասպանը բռնելու փոխարէն, իբր հեղինակ երկու Հայ բերեց բանտարկեց: Ահա և այլ դէպքեր: Թիլ գիւղացի քիւրդ Թամօն Աւգաղբիւրի ռէս Ծակոբին գիւղէն դուրս հանեց և սպաննեց: Պատճառը: Պատճառը այն էր, որ կտոր մը հացի տէր էր, այսինքն ունեւոր էր: Պաշակցի աշխրէթներէն Սատոյի տղայ Իւսուֆն Երեշտէր գիւղի տէր Ծարութիւնին հրացանով զարկեց և վիրաւորեց: Գընդակը անոր կոնէն դուրս ելնելով՝ կը հանդիպի նոյն գիւղի ժամկոչին և ան ալ կը վիրաւորուի: Երկուքի վիճակն ալ ծանր է: Առինջ գիւղի Զաֆար-աղի երկու քիւրդ լաւուկներ զարկեցին նոյն գիւղի ռէս Գաւթի տղայ Թագէտին: Բայց որ մէկն ասեմ կամ գրեմ — չեմ գրտեր. . .

**Կ Ա Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ի Կ Ն Ե Բ**

ՏԱՄՆՈՐՈՐԻ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 22 մարտ

Գուք երևի արդէն նկատեցիք անցեալ նամակից, թէ ինչ զորաւոր և շատ անգամ անհաւատալի վճռական դեր է խաղում բիւրօկրատիական Ռուսաստանում՝ չիւնօ վնիկի անձնաւորութիւնը և նոյնիսկ կապրիզը:

Դա մի փաստ է, վաղուց ճանաչած և շատ անգամ արձանագրւած ռուսաց զբաղանուծեան մէջ բայց, իհարկէ, անուղղակի ճանապարհներով, շնորհիւ գրաքննութեան ծայրայեղ ձնշման: Բանաստեղծ Նեկրասով, երգիծաբաններ՝ Գօգօլ և Էչեգրին, թատերագրող Օստրովսկի, ժողովրդագրող Ռուպէնսկի, պուբլիցիստ Վիխայլովսկի և շատերը կենդանի ռուս գրողներից հրաշալի էջեր ունին՝ պատկերացնող այդ երևոյթը: Էէնց նորերս հռչակաւոր Լեվ Տօլստոյ իր «Ծարութիւն» բոմանի մէջ — որի ֆրանսերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ Փարիզում — իմիջի այլոց նոյն տխուր երևոյթն է շեշտում, բաց անելով սիրտ կտրատող տեսարաններ բանասպին կեանքից:

Սակայն ես հեռու եմ հարցի ընդհանուր քննութեան մէջ մտնելու դիտաւորութիւնից, և կը շատանամ մի քանի փաստեր միայն բերելով կովկասեան կեանքից, որ իդէպ է ասել մինչև այժմ էլ terra incognita է նոյն իսկ ռուսաց գրողների համար, — փաստեր, որոնք ձեռ վերջնականապէս կը համոզեն, որ բիւրօկրատիական ձնշումները աւելի ուժեղ, նոյնիսկ կրկնակի են Կովկասում, քան ներքին Ռուսաստանում, քանի որ ընդհանուր ձնշումներին Կովկասում աւելանում է և մի այլ արդէն յայտնի ձնշում, այն է ազգայնական ձնշումը:

Մինչև այսօր էլ, հէնց որ կառավարութիւնը նշանակում է ունէ պաշտօնեայ Կովկասում, առաջին հարցը, որ տրւում է, այն է թէ ինչպէս է վերաբերւում նա ազգայնական հարցերին: Դժբախտաբար նոյնը կարելի է ասել և աւելի բարձր պաշտօնեաների համար: Երբ հեռագիրը լուր է բերում, թէ կայսրը այն ինչ մարդուն նշանակեց, դիցուք, ներքին գործերի միսիստր, — Կովկասում, ինչպէս և Լեհաստանում կամ Ֆինլանդիայում, առաջին հարցը էլի այն է, թէ ինչպէս է վերաբերւում միսիստրը այս կամ այն ազգութեան:

Դա մի այնպիսի քաջածանօթ երևոյթ է, որ յայտնի է ոչ միայն մեծ-մեծ քաղաքներում, այլ նոյնիսկ շատ յետ ընկած գիւղերում, ամենատեղէն գիւղական հասարակութեան մէջ: Գիցուք Անդրկովկասի ունէ յետին գաւառում — Նոր-Բայաղէթի, Զանգեզուրի կամ Հին-Նախիջևանի գաւառներում — նշանակում է մի գաւառապետ կամ աւելի ստոր պաշտօնեայ՝ մի պրիստապ: Անմիջապէս ամբողջ գաւառում այն հարցն է զարթնում, թէ արդէօք նոր պրիստապը հայատեացի է թէ թրքացի և կամ կաշառակեր է թէ օրինաւոր: Օրէնքով արդեւեւ չէ կաշառակերութիւնը. օրէնքով թոյլ չի տրւում հային հալածել նրա համար, որ նա հայ է, կամ վրացուն ու թուրքին պաշտպանել միմիայն նրա համար, որ նա վրացի կամ թուրք է. — բայց ո՞վ է օրէնքին՝ նայողը:

Ահա մի քանի դժեր իրականութիւնից: Մրանից մի քանի տարի առաջ, Գանձակի նահանգի գաւառներից մէկում՝ Նարի անունով թուրք աւազակը տակնուվրայ էր անում ամբողջ գաւառը: Տեղական իշխանութիւնը ոչ մի կերպ չէր կարողանում ազատել գրանից: Գիտէք ինչո՞ւ. որովհետև ինքը գաւառապետի օգնականը, մի թուրք պաշտօնեայ, ամենամօտիկ յարաբերութեան մէջ էր աւազակի հետ, և ամէն անգամ, երբ ձիաւորներ էին դուրս գալիս նրան բռնելու կամ սպանելու, նա ծածուկ նախազգուշացնում էր աւազակապետին, և սա իսկոյն ծլկում էր: Նոյն միջոցներին գաւառապետը, մի լեհացի, հեռացաւ պաշտօնից և թուրք օգնականը, իհարկէ կաշառքով, կարողացաւ գաւառապետի պաշտօնը ստանալ երևի իտրիտուր աւազակներին ցոյց տւած հովանաւորութեան: Էէնց այդ ժամանակ բարձրից հրաման է գալիս նահանգապետին՝ «վերջ դնել աւազակային խմբի ասպատակութիւններին՝ ինչպէս և լինի»: Երևի նահանգապետը այդ միջոցին է իմանում «գործերի գրութիւնը», ուստի և հրահանգում է թուրք գաւառապետին. «Եթէ մինչև մի ամիս նաքին իր խմբով կամ բռնած կամ փախցրած չլինի՝ դուք անմիջապէս կը զրկուք ձեր պաշտօնից»: Ի՞նչ էք կարծում, — ամիս չանցած արհեսարբու աւազակը դուրս եկաւ այդ գաւառից և քանի որ իրեն բարեկամ թուրքը վարում էր գաւառապետի արդիւնաւէտ պաշտօնը, այլևս այդ գաւառը ոտք չդրեց. . .

Մի ուրիշ գիծ: Երևանի նահանգի մի քանի գաւառներում, որտեղ թուրքերը մեծ թիւ են կազմում, պրիստապետների պաշտօնը մեծ մասամբ թիւրքերի ձեռքն էր: Մի օր՝ նոր եկած գաւառապետին — որ ազգով ռուս էր — օգտակար թւեց հոգալ որ թուրք պրիստապետները, նոյնիսկ լաւերը, հեռացան և նրանց տեղ նշանակեն ռուսներ: Շատ չանցած գաւառում գլուխ բարձրացրեց աւազակութիւնը՝ ամենայանդուզն չափերով: Եւ քննութիւնից երևաց, որ թուրք ծառայողները և պաշտօնագործ թուրք պրիստապետներն էին այդ աւազակութեան աճեցնողները, որպէսզի ցոյց տան, որ հանգստութիւնը միայն այն ժամանակ հնարաւոր էր լինի, երբ իրենք թուրքերը կը լինեն պաշտօնի մէջ: Նոյն երևոյթը կրկնեց նահանգապետ գեներալ Վիրէիզը — որի մասին առիթ եմ ունեցել խօսել երկու օր նամակում — ազգով ռուս, և ֆանատիկ ռուս, փորձեց հեռացնել ոստիկանական

պաշտօններին թուրքերին, նրանց տեղ ուռւներ նշանակելու համար: Գաւառը աւազակութիւնների օ ջ ա խ դարձաւ, մանաւանդ այն պատճառով որ- թուրքերին հեռացնելուց յետոյ «ագագասեր» նահանգապետը, իրեն տւած հրահանգին ենթարկելով պաշտօնի հրահրեց ոչ թէ ժողովուրդը ճանաչող օրինաւոր պաշտօնեաներ լինեն նրանք հայ, ուստ թէ մահմետական, այլ միմիայն իր անձնական ծանօթ ուսաներ, այն էլ ներքին նահանգներից, ուրիշ խօսքով՝ այնպիսի մարդիկ, որոնք ոչինչ հասկացողութիւն չունեն Գանձակի նահանգի տեղական պայմաններին մասին և ուրեմն յաջողութեամբ վարել իրենց պաշտօնը չէին կարող:

Գուք տեսնում էք ուրեմն, որ չինօթիկները գործնեութեան հարցում այժմ ահադին դեր է կատարում ազգայնութիւնն և ոչ թէ նրանց արժանաւորութիւնը: Կառավարութիւնը աւանց ունէ գրական հետազոտութեան այն եղանակացութեան է հասել, որ Կովկասում բոլոր կառավարչական պաշտօնները պիտի տալ ուսանելին և գրա շնորհիւ տեղական արմինստրացիայի մէջ գլխաւոր տարրը կազմում են ուսանելի: Նրանք չգիտեն տեղական ոչ մի լեզու, ծանօթ չեն ժողովրդի կենսոյին, տեղական պայմաններին և այդ պատճառով, եթէ նրանք երբեմն օրինաւոր մարդիկ էլ են, իրօք լաւ պաշտօնեայ չեն լինում: Ըղջապատողները իրենց ձեռքում նրանց խաղաղք են շինում:—Տեղացիներին պաշտօններ չեն տալիս կամ շատ քիչ: Արացուն եթէ ոչ միշտ գտնէ մեծ մասամբ ուղարկում են այնտեղ, որտեղ ազգաբնակչութիւնը հայ է, այն յուսով, որ վրացին հայի հետ չի միանալ այլ թշնամական դիրք կը բռնի: Աւելի ներողամիտ են դէպի թուրքերը, բայց դժբախտաբար, շնորհիւ արմինստրացիայի ընդհանուր ապականութեան, փոքրիշատէ զարգացած, օրինաւոր թուրքերը չեն, որ պաշտօնի են հրահրում, այլ մեծ մասամբ բոլորովին տգետ, բայց ճարպիկ ու առատ կերպով ուստ «մեծաւորներին» կաշառողները: Եւ շարունակում են, իհարկե, գրանք վարել գործերը բոլորովին պարսկական կարգերով, — ծեծ, եսասուղներ, կաշառք, ձրի ապրուստ գիւղերում, նոյնիսկ ենիչերական բռնութիւններ և իլրունայ դուրդի անվերջ աւազակութիւն, գողութիւն և յափշտակութիւն թուրքերի ձեռքով, որոնց սիրտ է տալիս այն, որ «մեծաւորը իրենց մարդն է»:

Հայերին, ինչպէս ուրիշ անգամ էլ առիթ է եղել շեշտելու, սովորաբար պաշտօն չեն տալիս Կովկասում: Զինւորականին այժմ ուղարկում են Ահմատան կամ հիւսիսային նահանգները ու Վիրի: Նոյնիսկ հայ զինւորներին սկսել են ուղարկել ներքին նահանգները: Արմինստրացիայի քիչ-շատ պատասխանատու պաշտօնի մէջ այժմ համարեա հայ չկայ: Կառավարութիւնը կասկածում է, որ նրանք կը միանան երևակայական «հայկական շարժման»: Մինչև անգամ այնպիսի անմեղ պաշտօններ, ինչպէս է փօւտային Գաւառութիւնը, ա կ ջ ի զ ա յ ի ն պաշտօնը, հարկային տեսչութիւնը և ի վերջոյ դատաստանական պրիստայի անշնան պաշտօնը սիտեմատիկաբար խլում են հայերից կամ եթէ չեն խլում, այդ պաշտօնները ունեցող հայերին ուղարկում են այնպիսի տեղեր, ուր ապրում են վրացիներ, թուրքեր, լեռնականներ, ուսանել: Երևակայիլ կարող էք, որ նոյնիսկ պետական բանկում հային պաշտօն չեն ուզում տալ: Հաջարից մէկը: Մի Ֆինանսիստ

հայ երիտասարդ, մինչև իսկ կապերով պաշտօն է խնդրում պետական բանկի կովկասեան ձեւերից մէկում: Գետերգուրում չեն ամաչում գրաւոր կերպով նրան պատասխանել, որ սիրով նրան, իբր լաւ ֆինանսիստի, պաշտօն կը տան, որտեղ կամենայ, միմիայն ոչ... Կովկասում: Հայերին հեռացնում են մանաւանդ Թիւրքիայի սահմանագծից, որպէսզի սահմանագլխի կէտերում ոչ մի կառավարչական պաշտօն տանջող թիւրքահայերի ազդակիցների ձեռքում չլինի...

Այս տխուր փաստերից դժւար է եզրակացնել, որ կովկասեան վարչութեան մեխանիզմը, դրւած լինելով այդ աստիճան անբնական և անմիտ հիմքերի վրայ, լաւ լինել չի կարող: Եւ իրաւի: Այ մի մարմին այնքան ապականւած չէ, որքան կովկասեան արմինստրացիան: Նա ապականւած է այն գլխաւոր պատճառով, որ տեղական լաւ, օրինաւոր ուժերը տեղ չեն գտնում նրա մէջ: Տեղ չեն գտնում և լաւ ուսանելը, որովհետեւ բուն Խուսաստանից մեծ մասամբ միայն այն տեսակ ուսանել են համաձայնում թողնել իրենց մայր հայրենիքը և գնալ հեռու Կովկաս (որ երկար ժամանակ արքորի վայր էր ուսանելի համար), որոնք արժեք, պաշտօն, ապագայ չունեն և որոնք գտնում են ապրուստ որոնելու այնտեղ, որտեղ ուստ ծագում ունենալը արդէն մի գրական է արդիւնաւէտ պաշտօն ստանալու համար...

Աւելի տխուր է այս «երևոյթի» քաղաքական կողմը, և այդ, մանաւանդ վերջին 15-20 տարւայ ընթացքում, արտայայտում է համարեա ամէն մի քայլափոխում: Կովկասեան ազգաբնակչութիւնների, մանաւանդ հայերի ժամանակակից պատմութեան մէջ անթիւ փաստեր կան ապացուցանող այդ գրութիւնը, և ես կը բերեմ այդ փաստերից մի քանիսը:

1895-96 թւականին, երբ թիւրքահայերի խնդրը սուր կերպարանք էր ստացել և Կովկասում ամէն մի չինօթիկ իր պարտքն էր համարում «հայկական դաւադրութիւններ» քրքրել և գտնել մի ուղղափառ գաւառապետ սկսեց մինը միւսի ետեից զեկուցումներ ուղարկել իր նահանգապետին՝ բացատրելով որ քաղաքի մէջ «հայերը գաղտնի պատրաստութիւններ են տեսնում, գէնքեր են գնում և ուղարկում, դիշերային գաղտնի ժողովներ են կազմակերպում»... և վերջացրեց նրանով, որ սկսեց նահանգապետից թոյլտուութիւն խնդրել «աբստրելու ղեկավարներին գաւառի խաղաղութիւնը ապահովելու համար»... Նահանգապետ \*\*\*, որ երկար ժամանակ ոչ մի պատասխան չէր տալիս այդ «քաղաքական ղեկուցագրերին», յանկարծ հեռագրով իր մօտ կանչեց գաւառապետին: Հաւաքելով իր բոլոր փաստերը, գաւառապետը ճանապարհ ընկաւ նահանգական քաղաքը: Նա արդէն վաղորօք վայելում էր այն քաղցր ըրուկները, երբ նահանգապետը լսելով նրա ղեկուցումները, կը սեղմի իր ձեռքը և անմիջապէս կ'առաջարկի նոր շքանշան «ի վարձատրութիւն նրա արթուն հսկողութեան»: Հասաւ տեսակցութեան օրը: — «Պատմեցէ բերանացի, ինչ որ գիտեք» — և գաւառապետը սկսեց... անլուր առասպելներ: Հէնց այն ըրուկին, երբ նա յարձական ժպիտով աւարտեց իր երկար պատմութիւնը, ծերունի նահանգապետը վեր թռաւ տեղից և որոտաց. «Արագարձէք այսօր և եթէ, մի կողմ թողէք այդ բոլոր յիմար պատմութիւնները, որոնք միայն ձեր գլխում

գոյութիւն ունին, և կուեցէք մի բանի դէմ — Թուրք աւազակների դէմ, որոնք քարուքանդ են անում գաւառը: Իսկ ինչ վերաբերում է հայերին նրանց համար ես եմ երաշխաւոր, հասկացաք: Եւ այդ օրից սկսած՝ ամէն ինչ փոխեց ու գաւառապետի զեկուցումները միշտ վերջանում էին այս խօսքերով՝ «Հայերը կատարելապէս խաղաղ են և օրինապահ»:

Մի ուրիշ փաստ: 80-ական թւականներին, երբ Երևանի նահանգը կառավարում էր գեներալ Շալիկով, — որ համ ինքը վատ էր տրամադրուած դէպի հայերը, համ էլ շրջապատուած էր այնպիսի ուսուցիչներով, որոնք միշտ նրա ակննդի տակ փսփսում էին, թէ պէտք է «խստօրէն հսկել» հայերի կեդրոնին Արարատեան դաշտին, — ամբողջ Երևանի նահանգում անպակաս էին դաւադրութիւններ, հայկական սեպարատիզմ և անհնազանդութիւններ: Իբրև հետևանք այդ «ինսօվնիկական քաղաքականութեան» — խուզարկութիւններ, կաշառքներ, նոյնիսկ արտոյ: նահանգապետը այնտեղ հասաւ, որ սկսեց կուեցնել Թուրքերին հայերի հետ՝ գաղտնիքն եր իմանալու համար: Բայց հէնց որ նոյն «հայկական» նահանգում նշանակեց մի ուրիշ նահանգապետ, կուս Տիգրանգուզէն, համեմատաբար աւելի արդար և տակտով մի մարդ Թուրքերն էլ դադարեցրին կուել հայերի հետ, ձերբակալութիւններ և խուզարկութիւններն էլ քջացան, թէև դա Թուրքահայոց շարժման ամենատաք ժամանակն էր: Մի ուրիշ նահանգում, այն է Գանձակի նահանգում, քանի որ նահանգապետը իշխան Նակաշիձէն էր, — կոփկասեցի, որ չէր սիրում — «հարցեր ստեղծել», — գոյութիւն չունէր ոչ մի քաղաքական-հայկական հարց. բայց հէնց որ նոյն նահանգում նշանակեց նահանգապետ Վիրէպի մի «թթու» ուսուցիչ, թշնամի ամէն մի ուրիշ ազգութեան, դիւթական գաւազանի մի հարածով, նորից սկսեց «հայկական շարժումը», նորից խուզարկութիւններ, նորից կասկածներ...

Գարձեալ մի բնորոշ փաստ: 1890 թւին Մակար կաթողիկոսի օրով, Էջմիածնում կատարուած էր մեռնի օրհնութիւն, որ գրաւել էր Վովկասի բոլոր կողմերից բաւական բազմութիւն: Բոլորովին պատահամբ նոյն միջոցին Էջմիածին էր գնացել մի շատ նշանաւոր հայ գործող: Եւ ահա բոլորովին անհասկանալի պատճառով սկսում են լուրեր տարածուել թէ Էջմիածնում պատրաստուած է երկու քաղաքական մեծ ցոյց՝ մէկը Մակարի դէմ, միւսը՝ յօգուտ Թուրքահայերի, և այդ ղեկավարութեամբ յիշեալ նշանաւոր հայի: Երևանի ոստիկանութիւնը սկսում է շարժուել և կրակի վրայ իւր ածեր: Միևնորհնութիւնից երկու օր առաջ կառավարչապետ Շերէմետով ստանում է Երևանի այն ժամանակապէս նահանգապետ գեներալ Ֆրեդէից մի հեռագիր, որով նահանգապետը՝ իբրև «քաղաքական նշանաւոր գիւտ» հարորդում է թէ Էջմիածնում պատրաստուած է ժողովրդական ցոյց՝ ղեկավարութեամբ... (հարորդած է անունը), թողլուութիւն խնդրելով խիստ միջոցներ ձեռք առնել այն է՝ «24 ժամում հեռացնել ղեկավարին Երևանի նահանգից և մի դունդ զօրք ուղարկել Էջմիածին՝ կարգ պահպանելու համար»: Կառավարչապետ Շերէմետով, որ, հակառակ գեներալ Ֆրեդէի տրամադրութեան, լու էր վերաբերում դէպի հայերը և անձամբ ճանաչում էր այն անձնաւորութիւնը, որ

յիշատակած էր իբրև ղեկավար, զգալով որ այդպիսի միջոցներ ձեռք առնելով կարելի է չեղած տեղից բարդութիւններ ստեղծել, անմիջապէս կարգադրում է ոչ մի արտասովոր միջոցի չգրմել: Ասում են, որ մեռնի-օրհնութեան ամբողջ օրը Շերէմետովը անհամբեր և բաւական անհանգիստ սպասում էր տեղեկութիւնների Էջմիածնից: Եւ հեռագիրը լուր բերեց, որ ամէն ինչ խաղաղ անցաւ: — Երևակայեցէք մի բոպէ, թէ ինչ ծանր հետևանքներ կարող էին տեղի ունենալ եթէ գեներալ Ֆրեդէին յարող էր մարդիկ պարտել և զօրք ուղարկել պաշարման վիճակի մէջ գնելու ահագին բազմութիւնը... Այն մասնաւոր կուի, ուէ պատահական ազուակ կարող էր թաւ զօրապետին իբր «նշան», և ահա պիտի հուէր անմեղ մարդկանց արիւն, ստեղծելով հայկական ապրտամբութեան նոր հարց Էջմիածնի վանքում...

Էլի մի ուրիշ փաստ: 1893 թւի սկզբի օրերին Թիֆլիզում լուր է տարածուած թէ հայերը Զրօրհենքի տօնին, երբ տասնեակ հազարներով հաւաքուած են իմիսալին տօնել այդ կրօնական օրը, պիտի ցոյց անեն կառավարութեան դէմ: Լուրը սկիզբ էր առել հետևեալ դէպքից: Գրանից մի քանի օր առաջ, այն է 1892 թւի դեկտեմբերի 27-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ ականաւոր հայ գրող Գրիգոր Արծրունու թաղումը, որ համազգային սուգի կերպարանք ստացաւ: — բազմութիւ պատգամաւորութիւններ, հարիւրաւոր պատկերներ, աւելի քան 50 հազար ժողովուրդ: Հայերի սուգը երևի դուր չ'եկաւ «ուսացման» ներկայացուցիչներին: Եւ եկեղեցուց դուրս դաշուց յետոյ, երբ հանդէսը պիտի անցնէր քաղաքի գլխաւոր փողոցով, որտեղ գտնուած է Արծրունիների առհմական շքեղ տունը, և որի առաջ հայերը ըստ եկեղեցական սովորութեան ուզում էին հոգեհանգիստ կատարել, ոստիկանութիւնը արգելեց, առաջարկելով անցնել երկրորդական մի փողոցով: Տխրասիրտ բազմութիւնը ականջ չ'էր եց և առաջ անցաւ: Տեղի ունեցաւ մի անխուսափելի ընդհարում ոստիկանների և սգաւոր հայերի մէջ: Անմիջապէս սկսեցին բազմութիւ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ, հիմնաւ ինչպէս միշտ՝ այն ենթագրութեան վրայ, որ հայերը վճռել էին թաղման առիթով ցոյց անել կառավարութեան դէմ... Բայց դրանով չ'վերջացաւ կասկածը: Տասն օրից յետոյ, երբ պէտք է տեղի ունենար հայերի մի նոր կրօնական համախումբ՝ Զրօրհենքի տօնի առիթով — դարևոր սովորութիւն, որ տեղի է ունենում ամէն տարի, — բոլորեւ յիշեալ «ինսօվնիկները» շշուկ բարձրացրին, թէ այդ նոր համախումբն ժամանակ էլ հայերը ուզում են նոր ցոյց անել: «Ազում են» — դարձաւ «կարող են», «կարող են» — «վճռել են», և ահա պատրաստ էր Զրօրհենքի ապստամբութեան ծրագիրը: Հայերի դէմ կատարած «ինսօվնիկները» ոչ մի միջոց չ'խնայեցին գրգռել իշխանութիւնը: Լուր պտտեց քաղաքում մինչև անգամ, որ առաջարկած է հանդէսին ներկայ եղող ուսուցիչներին բաժանել սովորական այդ օրայ համար ընդունուած խլատ փամփուշտների հետ նաև գնդակաւոր փամփուշտներ, իսկ հայ զինւորներին տալ միմիայն խլատներ: Բարեբախտաբար տեղացի զինւորների գնդապետը բողբոլում է այդ ծրագրի դէմ ասելով «Ես կասկած չունեմ իմ զինւորների դէմ, և եթէ զօրքի վրայ էլ սկսենք կասկածել, էլ ում վրայ պիտի յոյս դնենք»: Նոյնպէս բարեբախտաբար բարձր իշխա-



նութեան մի քանի ներկայացուցիչները՝ աւելի հեռա-տես գտնւելով յայտարարել են, որ իրենք երաշխաւոր են հայերի օրինապահութեան մասին, առաջարկելով ոչ մի աջակցութիւն միջոցի չգիտնել:

Այ մի շարժում մի, իհարկէ, տեղի չունեցաւ, բացի այն շարժումից, որ հայերը գործեցին դէպի սառած Բաւար խաչը շուրջ գցելու համար, ճիշտ այնպէս, ինչպէս ուսնները և վրացիք: Արդ, ի՞նչ կարող էր տեղի ունենալ, եթէ տասնեակ հազարաւոր ամբոխը շօթապատէր զինուորներով և ոստիկաններով, բոլորն էլ գրգռած ցնորամիտ կասկածներով: Երևակայեցէք ինքներդ...

Ահա վերջապէս էլ մի փաստ՝ փոքր ինչ կօմքեզ կան բնութիւնով: 1897 թւին էր: Աշնան մի գեղեցիկ օր Թիֆլիսի ոստիկանատանը ստացուեց մի անօնի մ նամակ: Իրարանցում: Ոստիկանապետը վազում է նահանգապետի մօտ, նահանգապետը՝ կառավարչապետի օգնականի մօտ, օգնականը՝ կառավարչապետի մօտ: Ահ սարսափ: Հայերը ապստամբուեցին: Ապստամբութիւն Կովկասի մայրաքաղաքում, բարձր իշխանութեան ընդհանուր: Ապացոյց: Ապացոյցներ շատ են, բայց ահա նրանցից ամէնաառաջինը, ամենամեծը, ամէնայայտին, — «Զիու»: Ի՞նչ: Այո, մի աննշանակ, խորհրդաւոր, նորաստեղծ բառ, որ պիտի ծառայէ հայերին իբր ազգային շարժակէտը այն տների վրայ, որոնց ձակատին գրւած է «Զիու»: Ոստիկանութիւնը գաղտնորէն փնտռում է այսպիսի տներ: Մեծ է նրանց թիւը, և համարեա քաղաքի բոլոր մասերում: Ճիշտ է, ոստիկանութիւնը աչքով տեսաւ, որ այդ նշանակ «Զիու» գրւած է ոչ միայն այնպիսի տների վրայ, ուր ապրում են վրացի, ռուս, գերմանացի, թուրք, այլ և այնպիսի տների վրայ, ուր բնակուում են հայեր, նոյնիսկ հայ «հայրենասէրներ» — բայց ոչինչ: «Այդ արեւել է իշխանութիւնը խաբելու համար» — վճռեցին խելօք ոստիկանները: Եւ ահա սկսեցին խորհրդակցութիւններ նահանգապետի մօտ, կառավարչապետի պալատում — գաղտնի, սոսկալի, ծանր խորհրդակցութիւններ: Պէտք էր վճռել. — ի՞նչ անել. արդեօք պաշարման մէջ դնել ամբողջ քաղաքը, թէ պաշարել միմիայն «ղեկավարներին» բնակարանները և բռնել բոլորին... Մի օր ևս՝ և գուցէ քաղաքի վրայ կը պայթէր մի անսովոր դժբախտութիւն: Բայց — փառք պատահումներին — դեռ խիստ միջոցներին դիմելու վճիռը չկայացած՝ ոստիկանապետը իմանում է գաղտնիքը: Ռուս մի չինովնիկի որդին հօրից փող է կնդրում: — Ինչո՞ւ, հարցնում է հայրը: — Կաւիճ պէտք է առնեմ, որ «Զիու» գրեմ, ինչպէս ընկերներս են գրում... Եւ ո՞վ խայտառակութիւն: Ապստամբութեան գաղտնիքը բացւած է: Ոստիկանապետը տեղեկացած եղելութեան՝ վազում է կառավարչապետի մօտ և բրտինքի մէջ խեղդեալ կարմրած, հեւալով՝ պարզում այդ խորհրդաւոր «Զիւ», հայկական ապստամբութեան սոսկալի ազգանշանը, ուրիշ խօսքով՝ — աշակերտական այդ հանաքը: Այո, ոչ աւել, ոչ պակաս — սոսկ աշակերտական հանաքը: Երկրորդ գիմնագիտայի աշակերտները, կատաղած իրենց մի ուսուցչի դէմ, վրդոված նրա խստութիւններին, վճռում են նրան խայտառակել. նրան տալիս են շինծու մի անուն, «Զիու» և որոշում՝ ոչ թէ միայն գիմնագիտայի մէջ, այլ ամբողջ քաղաքում՝ փողոցներում, հրապարակներին, սիւններին, վերջապէս տների պատերի վրայ, ուր որ այդ հնար է՝ կաւիճով գրել «Զիու», որպէսզի

ուսուցիչը՝ ուր էլ աչքը դարձնի՝ միայն այդ խօսքը՝ «Զիու, Զիու, Զիու» կարդայ: — Որպիսի՞ կատակ: Եւ այն միջոցին, երբ չարաճճի գիմնագիտները կաւիճ էին դնում իրենց յարձակումները ատելի ուսուցչի վրայ համատարած դարձնելու, Թիֆլիսի ուսուցիչները զօրք և զէնք էր պատրաստում՝ «կաւճեայ ապստամբութիւնը» արմատախիչ անելու համար...

Մեծ սխալ կը լինի կարծել, որ «կաւճեայ ապստամբութեան» այս բախտաւոր վախճանը ուրախացրեց բոլոր չինովնիկներին: Անտարակոյս եղան ուրախացողներ, բայց մեծ մասը խոժոռեցին իրենց դէմքը, երբ տեսան, որ էլի մի անգամ «առիթը» ձեռքից փախաւ «մեծ ծառայութիւններ մատուցանելու հայրենիքին» կամ պարզ ասած՝ նոր շքանշաններ և աստիճաններ ստանալու:

Շքանշան և աստիճան — ահա դա է, որ անյագ և անխիղճ բիւրօկրատիային եռանդ, սիրտ և ուժ է տալիս «դաւադրութիւններ» հնարել և «ապստամբութիւններ» ստեղծել, քաջ գիտնալով, որ աւելի շուտ այդ ձանապարհով, քան թէ ազնիւ ծառայութեամբ, կարելի է ձեռք բերել և դիրք, և աստիճան, և շքանշան, և գովասանք... Դա է, որ հակառակ աշխարհ փաստերին, հակառակ օրէնքի, հակառակ օրինականութեան, յանդրգնութիւն է տալիս չինովնիկներին խաղեր խաղալու ոչ միայն անհատ-քաղաքացիներին, այլ և ամբողջ մի ազգի գլխին: Դա է, եթէ կամենում էք, ռուս չինովնիկներին ապականութեան գլխաւոր և անսպառ աղբիւրը:

Ի. ԱՆՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԳ ԴԱՐ  
(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՏԻՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Դարի վերջալոյսն է: Պանծալի դարը — շատ անգամ հռչակած, բայց և շատ անգամ նզոված — կը յանձնել շուտով անցեալի ալիքներին: Մարդկային բարեկեցութեան վիթխարի ծրագրները կը կտակէ նա յաջորդ հարիւրամեակին — ծրագրներ՝ մասամբ իրագործուած, բայց մեծ մասամբ դեռ իրագործելի: Արդ տեսակէտով նման են իրար դարուս արշալոյսն ու վերջալոյսը, ինչպէս մի դար առաջ՝ նոյնպէս և այժմ, դեռ ամբողջ քաղաքակրթուած աշխարհը ծփում է ալէկոծութեան մէջ. սարուկ ազգերի ու դասակարգերի ահեղ գոյամարտը գերիշխող ֆակտն է թէ դարամուտին թէ դարավերջին: Բայց որպիսի անգունդ երկու ծայրերի մէջ, որչա՞փ հեռու է գնացել պատմութեան անիւրը...

Այնքան մեծ են ու բազմաոտեսակ քաղաքակրթութեան նւաճումները վերջին հարիւրամեակի մէջ, որ 19-րդ դարը կանգնած է անհամար դարերի շարքում, որպէս մի հսկայ, եզակի, անզուգական:

Քաղաքակրթութեան նւաճումները... Ի՞նչ ենք արգեօք հասկանում դրանով: Արդեօք ժողովրդական մասսաների դարաւոր տնչանքներն իրականացան, մարդկային մեծամասնութիւնը ազատեց իր կեղեքիչների ձեռքից և արիւնոտ յեղափոխութիւնների շրջանն անցաւ... Արդեօք ազատութեան գաղափարը յաղթանակեց:

Եւ այո և ոչ:

Յարաբերաբար՝ այո, բացարձակօրէն՝ ոչ: Անուղղելի յոռետեսներն և պատմութեան ընթացքը թիւր ըմբռնողներն համար չկայ պրօգրէս: Կայ միայն մշտնջենական կերպարանափոխութիւն միւսնոյն ստրկութեան, միւսնոյն մարդկային-հասարակական լեզուութեան, երբեք երջանկութիւն: Սակայն պատմութեան ճշմարիտ, գիտական ըմբռնումը լաւատես է: Ամբողջ պատմական պրօցէսի մէջ սկզբից մինչև այսօր ազատութեան գաղափարի յառաջագիւտութիւնը անժխտելի է: Ազատ էր միջին դարերի ստրուկը հնազարեան գերիի համեմատութեամբ, աւելի ևս ազատ է այժմեան աշխատաւորը միջնադարեան ստրուկի դիմաց: Գարուս ամէնայեալին պրօլետարի և հին Հռոմի ու Աթէնքի ճշմարիտ գերիների միջև՝ անդունդը ահագին է: Բայց դիմենք մեր հարիւրամակին:

I

Մօտաւորապէս մի դար սրանից առաջ լիքեր ալի ի զմի փրկուէտ հոսանքը — որ մի ժառանգութիւն էր 18-րդ դարի և որ հոգի ու մարմին էր աւել Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ցնցումների մէջ — վարակել էր արդէն եւրօպական քաղաքակրթութեան պատկանող ազգերին: Նա տարածուում էր արագ, համաճարակի պէս, սպառնալով բնայինը անել բոլոր հնազարեան ու միջնադարեան դարձութիւնները: 19-րդ դարը մարդկային ընդհանուր ազատագրութեան հիմնաքարը դրեց: Գիտութիւն, մատերիալիզմ, ազգայնական ու սօցիալական շարժումներ առաջ ընթացան ձեռք ձեռքի տւած, ներդաշնակ, որպէս մի վիթխարի ամբողջական հոսանք, տոգորուած մէկ գերագոյն բաղձանքով՝ ազատել մարդուն կրօնի ու տգիտութեան լծից, քաղաքական ու տնտեսական շղթաներից: Աստուծոյ վնասուց բնութեան ու պատմութեան սահմաններից, և նրա հովանաւորեալ երկրաւոր բռնապետութիւնը դատապարտուեց մահուան:

Ազատութեան ոգին դարուս պահանջն էր, նրա էական և անդրդուելի տենդենցիան: Արեւմտեան Եւրօպայից սկսած մինչև թիւրքաց բարբարոսութեան մատնած փոքրիկ երկրները տարածուում էր ազատութեան անյաղճելի տենջը և ցնցում մասսաներին: Լիբերալիզմը դառնում էր մի ճշմարիտ խարաղան իշխողների համար, նա ծնում էր անընդհատ խռովութիւններ, վտանգելով գոյութիւն ունեցող քաղաքական-հասարակական կարգերը: Պէտք էր մի պատւար ստեղծել այդ խարաղանի դէմ: Պէտք էր ընկալիայի փողը հնչեցնել: Եւ ահա 1815-ին երեք ցամաքային հզօր պետութիւններ՝ Ռուսաստան, Աւստրիա և Պրուսիա՝ կնքեցին հռչակաւոր «Սրբազան Դաշնակցութիւնը»՝ Աիենայում, որը քրիստոնէական պարտք էր դնում իր անդամների վրայ՝ փոխարձաբար աշակցել վտանգի ռոպէներին: Ռեփիշխօսքով՝ «Սրբազան Դաշնակցութիւնը» սրբազնագոյն նպատակ էր դնում՝ խնդրել բոլոր հնարաւոր միջոցներով ժողովուրդների յեղափոխական ձգտումները և վախճան դնել ազատագրական շարժումներին:

«Խաղաղութեան հիմնական պայմանը՝ ն եր ք ի ն ա պ ա հ ո վ ու թ իւ ն է» — տրամաբանում էր Մետերնիխ՝ բռնապետութեան ամէնադժնդակ փաստաբանը: «Քրիստոնէական կրօնի սկզբունքներով տոգորուած՝ պիտի միանան պետութիւնները եղբայրական անբաժանելի

միութեամբ և աստուծային գերագոյն պատգամների համեմատ՝ պիտի աշակցեն իրար ամէն պարագայում» — այսպէս էր զառանցում միտովի Ալեքսանդրը, որ անպարտելի Բօնապարտին խոնարհեցնելուց յետոյ ինքնիրեն երևակայում էր համայն Եւրօպայի ընդհանուր հրամանատար:

Մեծ-մեծ սկզբունքները միշտ պատրաստ են բռնակաշնորի բերաններում, երբ նրանք ձեռնարկում են արիւնտ գործերի...

Քրանսիան իր 1789-ի ահեղ գաղափարներով մշտնջենական վտանգ էր բռնապետութեան համար: Ազատութեան, հաւասարութեան և ժողովրդական գերիշխանութեան սկզբունքները սարսափեցնում էին Մետերնիխներին: Պէտք էր մարել իսպառ յեղափոխութեան օղակը, ուսկից 20 տարի շարունակ այդ ահարկու գաղափարները, նապօլէօնեան պատերազմների շնորհիւ, տարածուէլ էին Եւրօպայի այլևայլ ծայրերում, «Հիւանդութիւնը օրէցօր աճում է, նրա առաջն առնելու միջոցներ են պէտք» — անդագար կրկնում էր Մետերնիխ:

Եւ միացան լեռագւորները յի մի անբաժանելի Սրբազան Երրորդութիւն: Երբեք ժողովուրդների դէմ այդպիսի հսկայական գաւաղութիւն չէր կազմակերպել: Եւ երբեք լեռեւս ազատութեան դահճապետները այնքան ցինիկ ու անհեթեթ չէին եղել իրենց ազգարարութիւնների մէջ: Քրիստոնէական եղբայրութիւն էին հռչակում վեհապետները, իսկ այդ հանդիսաւոր, սրտաշարժ ծանուցումների միջոցին, լուում էր յօշոտած շեհաստանի հեծկտանքը, որ մինչև երկինք էր հասնում: Ռզում էր Ետալիան, որին մատնել էին աւստրիական ատելի բռնապետութեանը. ողբում էր Բեյքիան, որին ստորագրել էին օտար հօլլանդիային, օտար լեղուկ կրօնով շահերով. ողբում էին գերմանացիները, որոնք քիչ առաջ նրան կանգնել կուեղու յանուն ընդհանուր հայրենիքի ազատութեան, իսկ այժմ ենթարկուում էին բազմաթիւ իշխանների կամայականութիւններին: Ամէն տեղ լաց ու հառաչանք: Ամէն տեղ ծաղրուում, կոխկռուում էր ազգայնական պատիւը, մարդկային իրաւունքները: Եւրօպան իրար մէջ բաժանում էին միապետները, ինչպէս կը բաժանէին հողային անքնակ մի տարածութիւն: Զուլում էին իրար հետ տարբեր ազգութիւններ, միանգամայն տարբեր պատմական տրագիցիաներով: Բովանդակ եւրօպական ազգաբնակչութիւնը ներկայանում էր նրանց, որպէս անբան անասունների մի հսկայական հօտ, որ պէտք էր առաջ քշել մտրակով ու խարաղանով և որ անմուռնչ հլու հնազանդութեամբ պարտաւոր էր հետևել իր «աստուծոյնտիր» առաջնորդներին: Այդպէս էր տիրող հասկացողութիւնը: Այդպէս էր գեռ մինչև օրս էլ թագակիր դահիճների բարոյախօսութիւնը, նրանց աւետարանը. — կոյր, ֆանատիկոս՝ իրենց ըմբռնումների մէջ, կատաղի ու մոլեգնոս հանդէպ այն բոլոր մահկանացուների, որոնք խիզախում են բռնանալ իրենց յաւիտենական, «աստուծատուր» արտօնութիւնների վրայ...

Բայց իրերի հոսանքը աւելի ուժեղ է, քան ամէնահզօր բռնակալը: Իդուր Մետերնիխ, յեղափոխութեան այդ երդուեալ լեշնամին, ձգնում էր յաւերժացնել տիրող վիճակը: Քրանսիական յեղափոխութիւնը զարկ էր տւել ամէն տեղ ազգային ինքնաձանաչութեան.

ժողովուրդների գեթ իմացական մասը եկել էր այն դիտակցութեան, որ ամէն մի ազգի համար կեանքի ու բարգաւաճման անհրաժեշտագոյն պայմանն է նրա անկախութիւնը: Գերմանիայում դեռ ևս հնչում էր Կեօրնէրի երգը. «Աճիր գերմանական հայրենիք, աճիր մեր դիակների վրայ»: Գեռ թարմ էր այն սքանչելի օրերի յիշատակը, երբ Ֆիխտե, այդ հսկայ մատփղղկ-փիլիսոփան, իր վերանցական սպեկուլեացիեաները թողնելով, դուրս էր նետուել անձուկ կարֆենտից և բոցաշունչ բարոզներով ելեքարականացնում էր իր հայրենակիցներին: Գեռ չէին մոռացել վերջապէս 1813-ի օրերը, երբ իրենք թագաւորներն էին բարձրաձայն ծանուցանում. «Ազատ եղէք, ժողովուրդներ, ազատ մարդիկ ենք բոլորս... Ոսկէ խոստումներ — բայց, աւաղ, ունայն — որ շտայլում էին Եւրոպայի հրամանատարները այն ժամանակ, երբ նրանց պէտք էր ոտքի հանել ժողովուրդներին ընդդէմ Նապոլէօնի... Գրեթե խոստումը և փոխանակ հռչակած ազատութիւնը գեթ մասամբ իրագործելու, Եւրոպայի վրայ նշանակեցին մի հսկայ ու անողորմ ժանդարմ, որ և անւանեցին «Սրբազան Գաշնակցութիւն»...

Ազատութեան գաղափարը չմեռաւ, չօգանւեց: «Ազատութիւնը դագաղի մէջ անգամ ապրում է» — ստում է Բեօրնէ: Այո, նա ապրեց նոյնիսկ «Սրբազան Գաշնակցութեան» ամրակուռ դագաղի մէջ և աճելով, ուռչելով ձայնեցրեց դագաղը: Յեղափոխութեան գաղափարը բնական անխախտի օրէնքով զարգանում ու տարածում էր նահատակ ազգերի մէջ: Մտքերի խմորումը աստիճանաբար սաստկանում էր համալսարաններում, զօրքի մէջ և ժողովրդի ստորին խաւերում, որոնց վրայ առանձնապէս ծանրացած էր բռնապետութեան չուծը: Մի նոր Եւրոպա էր բարձրանում խաւարի ու ստրկութեան մթնոլորտից — Երիտասարդ Եւրոպան թարմ, կորովի, գաղափարական, որի կոչումն էր խզել հինաւուրց դաւանանքների հետ և առաջնորդել ժողովուրդներին դէպի սօցիալ-քաղաքական ազատագրութիւն: Իրաւ է, մի աննշան փոքրամասնութիւն էր դա, բայց միշտ և ամէն տեղ խիզախ փոքրամասնութիւնն է, որ հարթում է ազատութեան ճանապարհը...

(Շարունակելի)

**Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ե Ո Ի Ի Զ Է**

ՀԱՅՐ. ՇԱՐՄԸԹԱՆ. — Oeuvres des Écoles d'Orient անուն երկամասնորկի վերջի երկու թիւերուն մէջ է. Շարմըթան քրդու յօդուք ունի «Տեղութիւն և յոյ» ու «Դատական ժամը» վերնագրով: Հոգեւորյա Ազարնանէն ետքը, զարմանալի չէ որ օտար եկեղեցական մը այդքան անխոհեմ, վայրագ կոպտութեան համառ լեզու մը խառնէ հայերու մասին ցոյց տուած քրիստոնէական զգացումին մէջ: Փրանսացի եկեղեցականին յօդածներուն մէջ շնչեղ նշխարք այն հոգին-հաւատքը քրիստոնէական, այն անմոռ լեզուն, որով երբեք և կաղնէր հայ ազգը անոր խորին վշտին վրայ բաւասար դնելու, եթէ... որովայնախօս մը չէր: Մենք, հայերս, մեամիտ էինք անոր անկեղծութեան, վերանծնութեան վրայ, զի մեր սովորական յատկանիշներէն մին եղած է բարեբարել ուրիշներուն անյետամիտ անշահախնդրութիւնով մը. դեռ ոսկեղարու «Կրանսի» թարգմանիչները չէին ձգտէր իրենց ազգային լեզուն պարտաւորել ընելու զրացի տգէտ ժողովուրդներուն և անոնց համար լեզու այբբէն կըստեղծէին: Հայր Շարմըթան վերանծնութեան, սրտի մեծութեան պատ-

րանքը տուաւ հայ ժողովուրդին. մենք ևը կարծէինք որ աշուտ տաճօր ծախը չպիտի իմանայ, աւետարանի պատուէրին համեմատ, բայց քարեսիրտ հայրը, ձեռքը խղճին վրայ դրած չընդունիր աղ և կնք կ'ուզէ ապացուցանել որ, ինչպէս քաղաքականութեան, նոյնպէս կրօնի մէջ ալ շահն է գլխաւոր շարժառիթը:

Հայր Շարմըթան իր վտիտ փառքին ու տարտամ համբաւին վրայէն սպունգ մը կ'անցնէ, իր ձեռքով քանդելով եր շուրջը ղիզաւած հմայքի թիթեւ սովաւերը:

Փրանսացի գծաարտութեան կոչ ընելու համար, թողիչի դերը կըստանձնէ սա լեզուն քանեցնելով.

«... Եթէ արդարութիւնը այսպէս ծանր կ'ուլա անոնց (հայր) վրայ, զուցէ անոր համար է որ 15 դարէ ի վեր հայերը ևը յարատեւեն Եւրոպայի, նետարակամներն ալ Եփեսոսի ժողովին ղաւտապարտած հերետիկոսութիւններուն մէջ...»

«Յրկնային շնորհք ևը յուզէ անոնց սիրտը և այս բաժան հերետիկոս եղբայրները վրոզվարոյց կուզան մեզի...»

«Կաթօլիկ գծասիրութիւնը (Գ) անոնց օգնութեան մոռնելով, ըրաւ ինչ որ քարոզը, հակամտութիւնը անկարող եղան իրագործել պայքան դարեր: Վանէն և Բարձր Հայրէն 30,000 հայեր պաշտօնսպէս կաթօլիկ արժանազուած են: Պէտք է օգնել Յիսուս Բրիտոսի փարսաբը քրքելու համար զանոնք...»

«Աստուծային նախախնամութեան գաղտնի ու խորհրդաւոր ծամբաները հասկանալի են այժմ որ թոյլ տուաւ որպէսզի բոլոր այս անպատմելի պատիժները թափին այս դժբախտ ժողովուրդներուն վրայ, զանոնք այսքան միտրական դարերէ կուր. ճշմարիտ եկեղեցու ճոցը քրքելու համար...»

Ինչպէս ևը տեսնենք, հայր Շարմըթանի հոգին մեր մեղքերուն համար ևը ձենձերի... Նարեկացիին հոգին պէս. ինչոր իրքեմն ին պելո (սրտածուկ) էր, այժմ մեղակալարանոյ ևը խօսի կաթօլիկ հայրը ևը կարծես կ'ուզէ գողնալ Հայաստանի «բազմերախտ» հայրնաւախտի փառքը:

Վերջնայէս հայր Շարմըթան, ամէն քանէն աւելի, նոյնիսկ երկնային շնորհներէն աւելի, իրեն յենակէտ ընտրած է քողոք, որով նոր Արքիմէլէսը, ևը յաւակնի տեղէն շարժել Հայաստանը ևը նետել պապութեան ծուլարանին մէջ, «և իրիցին մի հօտ ևը մի հովիւ»:

Յետոյ... երբ կաթօլիկ ըլլանք, Փրանսան մեզ պիտի պաշտպանէ: Նոյնը ևը հաւաստէ նաեւ «պատկերապաշտ» Ռուսիան. եթէ «յոժէ ցարիա խրանի» երգենք, եթէ ոռուսալուսան ըլլանք, պիտի ազատէ մեզ սուլթանը կարմիր ճիրաններէն: Անա ինչոր գեշք-ցեղեկ ևը փսիսան մեր ակնաշին օրթողորս ևը կաթօլիկ եկեղեցիները ևը մեր պատուհասները ևը վերագրեն աստուծային սրտմտութեան, որ իր անհուն բարձրութենէն վար կ'իջնէ պզտիկ, խեղճ ժողովրդի մը զգաստութեան ղաւտ սաւալ համար: Այս է Շարմըթանի լեղի հեղուքութեան ևը իր ծիզլիթութեան ինդոնկրակ փիլիսոփայութիւնը — pauperté philosophique:

Կրօնական վիճաբանութեան մասնելու սիլոստիկ փէհէլեվանութիւնը շունչը բարեբախտաբար: Բայց քանի որ մենք ևը մարտնչենք, պատմական ժողովրդի մը ազատութեան, մեծութեան ևը քարոզութեան համար, անպատշաճ չըլլար, եթէ երբեմն-երբեմն քաղաքական էտրիկներէն դուրս կրօնական ածպարարութիւններուն վրայ ալ ուշ դարձնենք:

Հայաստանի կոտորածները առիթ եղան որ քաղաքական ևը կրօնական այդ երկու մեծ երեւոյթները, իրենց զոյնը դուրս տան: Կրօնը չկրցաւ երկնային անշահախնդրութիւնը մը ցոյց տալ. օտար կողմները եղան այն արծիւները որոնք հին ևը ժողովին «ուր գէշն իցէ»: Միշտ ևը իսկ մեր ծովածաւալ դժբախտութեան հանդէպ ունեցան դժոխային խտրութիւններ, զատելով լուսաւորչական հայր կաթօլիկ կամ բողոքական հայր: «Փոխեցէք կրօնիդ որ հաց շուր տանց ձեզի», ևը ընտէին նահատակ հայու երեսին:

Կրօնի այլամուկ խոշոր ծծողը:

Հայր Շարմըթան լաւ կ'ընէր ևը զօրեղ դժոխքը նետելու այդ սրտախոց տողերը չգրէր այնքան փնթը անիծաբանութիւնով մը ևը թոյլ տալ իրեն ըսել որ «Աստուած հայերը ևը պատժէ ինչու որ ներտիկոսներ են»: Ի՞նչ տափակ ևը անհամ մտքը կ'ուրս որ կղերականներուն մէջ, որոնք երկնիցի կրօնի անունով, մարդկային սրտի էս ազնիւ ևը սքաւազ գագաղումներուն չեն խնայեր ևը որքան ղովելի պիտի ըլլար, եթէ մեր եկեղեցականները, քաղաքացիական առաքնութեան վրայ աւելի հօզ պաշտպան ունենային, քան երկնային դժգոյն առաքնութեան վրայ:

Հայր Շարմըթան, իրը նախատիպ մեր երեսին ևը նետէ Եւրոպայի անունը: «Հայերը Եւրոպեան» — ասա վերջին նորութիւնը:

Պակասէս հաւատքի հարցերու մէջ կ'ընել ոսկի է, որովհետեւ ուրիշն սխալը փնտռել, սխալ մը սխալով հերքել ըսել պիտի

ըլլայ, կամ նոր սխալի մը մէջ գործիւն այսինքն անընդհատ պիտի բողոքենք, յոռի շըջանակի՞ մը մէջ: Այսպէս չի՞նչ եղած բողոք հաւատքի վիճաքանութիւնները, որոնք մարդկային մտքի մղձաւանջը եղած են: Պատուէ մեզի, ո՞վ յայտնեմալան քաղաքը՞:

Սաւոյ մեր եկեղեցիին ոգին դպելու (ստոր պաշտպանութիւնը ձգելով մեր ցաւագար եկեղեցականութեան), կարելի է երկու խօսք ըսել Եւրոպէսի մասին: Եւրոպէս իր դարուն էն մեծ եւ պարկեշտ եկեղեցականը եղած է գրեթէ, թէն Կաթոլիկոսի աւագաններու ժողովէն դատապարտուած ըլլայ: Կ'ընդունի որ Բրիտանոս միտակ սատուածային ընտրելու ունի: Եթէ, որը որ Բրիտանոս ասուած եւ իր կրօնը երկնային ընդունինք, Բրիտանոս մաքուր աստուածային զուտ երեւոյթ մը ըլլալու է. ակէց ոչինչ վրաս կուզայ մարդկային ազգին եթէ խելքի մօտ քան ըլլայ, բայց երկու ընտրելու դնելը, կեղծիքի պաշտպանութեան տակ ապաստանի է: Ենթադրենք որ նոր ըլլար կենդանիներուն կրօն սորվեցնել, վստահ եղիք որ նրբամիտ եւ հրեշտակային աստուածաբանները չպիտի տնտնային ըսելու թէ Բրիտանոս աստուածային, մարդկային եւ անասնային ընտրելու ունէր:

Այս պահաւորութիւնը տեղի տուաւ վերջերս մեզի դէմ արծակուած այդ ստեղծուած, տգէտ միջնադարեան ամբաստանութեան ձեւը, որով հայերս իբր Եւրոպեան մոլար վարդապետութեան հետեւող հերետիկոս, պիտի եւ մարդկութեան ոլորտէն դուրս նետուած է համարուինք: Շատ տխուր է քանակաբար դարի մէջ տեսնել Շարմըմաններ, շարլաթաններ, որոնք գլուխուն. զօր կուտան, իսկաւր դարերու մղձաւանջը վերաբարձրելու համար: Բերթէ ամէն օտար կաթոլիկ տակէն ծիպելի մը կ'ելլէ:

Միթէ՞ Փրանսացիք չէին մեղքար, եթէ ըսէք որ հայերը քրիստոնէաներ են, այնքան լաւ քրիստոնէանք, որ Խաչակրութիւններուն մեծ ծառայութիւններ ըրին եւ Նոյնիսկ իրենց փոքրիկ թագաւորութիւնը վրայ տին, քրիստոնէայ բանակներուն օգնելուն համար: Տգէտ եւ անկայել գնեցր են ըսել թէ անոնք Եւրոպեան հերետիկոսներ են: Իսրայէլ գէնուարաներ թանգարաններու մէջ ցոյց դրելու համար միայն:

Բայց Շարմըման այսքան սպասելէ վերջ կը տեսնէ որ հայ ժողովուրդը շատ կարօտ է, իր մտքի խելագարուելին, կը կարծէ գտած ըլլաւ «նոգեքանական վարկեանք» դէն շարժելու համար անկեղծութեան բողոք, սովատանջ ժողովուրդի աչքին կաթոլիկ ոսկինքը շողացնելով:

Հայր Շարմըման գուցէ կ'ուզէ խաղալ կարդինալ Լավիճըրիի դերը: Լավիճըրի Ափրիկէի մէջ «ճերմակ հայրերու» բանակով կ'ուզէր սեւամորթ՝ Ափրիկէն քրիստոնէացնել. իրաւ է մեծ դեր խաղաց եւ Փրանսայի քաղաքականութիւնը միտակէս օգուտեցաւ անոր անաքելութենէն, այնպէս որ միտակէսի Կամպիլիան, մեծագոյն թշնամին կըրթականութեան, քացազանջեց. «կեղծարականութիւնը արտածելի ապրանք է՞», բայց Լավիճըրիին իր յաջողութեան հետ ունեցաւ եւ անասպատի պատրանքը:

Վերապատուելի հայրը եթէ կ'ուզէ որ արեւելեան քրիստոնէաները պապութեան «փարախը» մտնեն, առիտ օրն թշնամանելով ու «աստուծոյ վրէժխնդրութիւնը» հայցելով չէ որ պիտի յաշտուի, ոչ ալ Վատիկանի շանթերը: Ազնի հայրը գուցէ չար չի նիւզել մեր դէմ եւ իր իրօք «բարի սրտէ մը կը ըլնի» ըսել է Լաֆօնթէն... Բայց...

Ի՞նչ կը խոստանայ տալ մեզի եթէ կաթոլիկ ըլլանք: 20 դար պապութիւնը քաղցր ու գործեց յաւիտեանականին առջեւ, խոտն ու մնայլ մարդաստեղծ եւ անհրաժեշտ, բանադրանքի շարժ արին մէջ փոխանակ լուսաւորութեան շահին: Պապական անսխալականութիւնը մեզ չի փրկելու եւ գիտենք թէ պապը եթէ մեղքերը «կապելու ու արձակելու» աստուածային հեղինակութիւնը ունի, միջազգային քաղաքականութեան մէջ արհամարելի քանակութիւն մը եղած է: Բարեբախտաբար, այսօր ամէն ճամբայ «չու» չի տանիր: Մենք ժողովուրդ մըն ենք եւ կը սիրենք ծանշալ որ մեր կաթոլիկոսը սխալական է, հողածին է, կըրեն մարդկային քաղաքական, եւ չենք քաշել մեր սխալութիւնները մասնանիջ ճեւել. իրաւ է թէ մեր մէջ ալ ծիպեր եղան աստուածաբաններու համար ազգին, ամաջական թէօրիներով, թէ մեր կաթոլիկոսը անսխալ է, ամբասիր է, արդէն ազգին շնորհածը ան կը խորհի Խորէն է՞Քէտիին հետ:

Վերջապէս, ինչպէս քաղաքականութեան շոյնպէս եկեղեցիին մէջ, փոխանակ այդ տեսակ «կեզի» հիւանդութիւններու, որոշ փափկանակատութիւն մը, քաղաքավարութիւն մը կենալու է: Հայր Շարմըման պէտք չէր այդքան ցուրտ եւ աշխարհիկ շարմնադարձութիւն դնէր իր ցնծութեան մէջ. հայկական պատուհասները աստուածային նկատելով, գոհունակ անգիտակցութիւնով մը կ'արդարացնէ արդէն Համբող որ ուրիշ քան չէ բայց եթէ Ծնովայի «արդարութեան քաղուկ» որ կուրօրէն կը զարնէ պապութեան ամէնամեծ փառքին համար: Կարծես մեր սկանչին կուզայ

միջին դարու սա շարափառ պատգամը. «Հարկէք. Աստուած իրենները կը ծանշնայ»:

Արդեօք Հանթըրի ֆրանսան խաղա՞ց այդ տեսակ դեր մը, սուլթանի թաղուկը զինելով, որպէսզի հայերը զղջանար ս. Պետրոսի աթոռին դանման:

Հայր Շարմըմանի արեւմուտը «տէր զօրութեանքը» մեզի համար սիրելի չէինք ունի եւ ոչինչ յուսանջոյլ պապականութիւնը ընդունենալու մէջ: Եթէ ազգերու յիշողութիւնը չըլլար, Շարմըմանի երազը, իրօքապարտ թուական հարցեր էին: Սպանիան ամէնակաթոլիկ երկիրը, որու տիրապետութեան վրայէն արեւը մարը չէր մտնէր, միտիք ցանած է այսօր զլուռն վրայ ու զեջերը ցերեկին կանանելով չի կրնար իր սեւ ծակատազքին դարման մը գտնել. մոմիակ պէս այնքան փաթուած կըզգայ սըրբազան քահանայապետին օրնութեան կապանքներով: Սպանիայով մեծ հայրենապէտը, Հաստէլար, մեռած պահուն, խորին սրտցաւով մեծ կարէն «Սպանիոյ տազնապէս կը մեռնի»: Իսրայէլը աչքերնիս ամէն կողմ, պատմութեան նմանիսը շատ անգութ եւ աննորոգ դատախազ մըն է կաթոլիկութեան հանդէս:

Շարմըման կը ծզնի մեր զլուռն փաթուած կրօն մը, որ ստեղծեց հաւատաքնութիւնը, որ ստեղծեց քանադանքը, որ խաչակրութիւն քարոզեց մտքի ազատութեան դէմ, որ ազատութեան թաղուռն իսկ երազեց եւ... սուտ արցունք թափեց Հայաստանի կտորածներուն վրայ: Ապագային Կալուստայի (քաղաքակրթական) մը շնք ուզեր այժմէն բեղմնաւորել, Նոյնիսկ եթէ պապը Եզեկիէի տեսիլը ունենայ Հայաստանի գերեզմաններուն վրայ:

Փրանսան, դժբախտ Փրանսան, եթէ կրօնի համար մեզ պիտի պաշտպանէ՞ ըսել է շուրի դեր քաղաքական ամուր կարիսխ: Մենք տեսանք յաճախ, Փրանսայի հանրապետութիւնը իր անծնապատուութեան մօտիկ շահին ալ չկրցաւ պաշտպանել. ան միշտ տեղի կուտայ Արեւելքի մէջ, ձգելով որ կըրթական ֆանթօշները, իր շիջելիափառ անցեալին իբր ուրանկաններ, Փրանսայի արեւրակ, երազներուն վրայ Ave Maria օրհնաբանեն:

Մարդկային բարեգործութեան մէջ շառչել այդ տեսակ միտքեր, անօթիին հաց տալ կըր կաթոլիկ ըլլալ, ծուռ Նայել ան թշուախ որ պապին անունը չի գիտեր, դեւտացիին պէս անցնել ինկած հայ վիրաւորին քովէն, ահա ինչ որ կը հետեցնենք հայր Շարմըմանի ռիսիքոտ յօդուածէն:

Ճաւախ է այնքան ծայրահեղութիւնը կարգ մը կրօնի պաշտօնեաներուն որոնք ալ ու ծակ չեն ինչպիսի դատաւիտեմ, հայ-հոյեւ դժբախտ ժողովուրդի մը դարաւոր զգացումներուն, կրօնքին, յանուն պապութեան, որ մարդկութեան մէջ կրօնի բարբարոսութիւնը հիմնեց:

Հայաստանի Նոյի աղանչներով վերջվերջը ազուններու կը կերպարանափոխին: Հայր Շարմըմանի որդեգրած մէթոսը, հայ կեկեղեցին պապութեան մէջ հալեցնելու համար, սիրուն եւ մարդկային չէ. արեւին արտերուն մէջ հաշտութեան ծաղիկ չի բուսնիք, երբ ամենամեղ անոր վրայէն փարիսեցիութեան շուշուր կը լիչէ:

Հայաստանը, իրաւ է մեծ է իր դժբախտութիւնները բայց մարդկային զգացումի դէմ ոճիր մըն է շահագործել այդ դժբախտութիւնը, միայն յիշեցնենք ծակատազի վրէժխնդրութեան գոհ այդ փոքրիկ երկիրը, ամբողջ Ասիոյ մէջ քրիստոնէութեան ծոսեւարձ եղած է. այդքանը քաւ է որ պապական ամբարտաւանութիւնը յարգէ ծշմարտապէս «քրիստոնէայ երկիրը», ինչպէս է Հայաստանը որուն դէմ այսօր անբարեխղճօրէն խաչակրութիւն կը քարոզեն:

Մարդասիրութիւնը, այդ տիեզերական կրօնը, չէփոքնեց կրօնի փառասիրական ձգտումներուն հետ: Փրանսայի գերակշռութիւնը ատոր մէջ չէ. Հայ ազգը դրական ծառայութիւն կըստատէ Փրանսայէն, որը սիրելու համար կաթոլիկ կ'ըրեն դաս չենք անսիր. երբ կաթոլիկ ըլլայ հայ ժողովուրդը... գուցէ ատէ գայն, զի տօմիկեան հայրերը պիտր ծածկեն մեր աչքէն ծշմարիտ Փրանսան, մեզի փուր միս կերցնելով:

Սպասենք մինչեւ որ, Լուպէի իմթիպակ թանկագին շարմնաշին ետքը, սուլթան Համիդ, Հայր Շարմըմանին ալ իրաւ մը դրէ եւ պապին ալ սուր նոր մասնի մը:

Հայր Շարմըման զինովութենէ Նոյի մեղքութիւնը ունի. մեզի, հերետիկոսներու կը մտայ ինչպէս այդ մարդուն վրայ, որուն աչքերը աւելի ոսկեփայլ են քան գիւտափայլ:

Եւ իրաւ որ, աստուածային նախկին աստուածութեան գաղտնի ու կորցրաւոր ծածկաները հասկանալու են այժմ... ինչու որ թոյլ տուաւ որպէսզի Հայր Շարմըմանի հասցէին ըմնք.

Յոյնէն յետոյ տկրութիւն:

# Թ Ե Ր Թ Օ Ն

## Մ Յ Ե Յ Ի Կ Ա Ր Ի Ն Է

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏՄԵՐ

ՆԱԵՐ ԿԱՅ ԿԱՄԱՆՈՎ ԵՒ ՕՐԻՈՂՈՒՆԵՐԻՆ

### I

Մուծ գիշեր է:

Լուսինը՝ վշտացած այս գիշերայ սոսկալի ոճիրից՝ մթադնած ամպերի ետև պահել էր սգաւորի պէս: Երբեմն միայն դուրս էր հանում թախծալի դէմքը, նայում Մշոյ սքանչելի բայց տխրամած դաշտի վրայ, և իր դալուկ շողերով լուսաւորում Արածանու արնոտ ալիքները, Մեծն Սահակ Պարթևի ու Վահան Մաթիկոնեանի շիրիմները... և նորից սուզւում մուսլ սև ամպերի ետևում:

Գիշերային մթութեան մէջ հրդեհի կարմիր բոցերը օձի նման գալարելով բարձրանում էին երկինք և լուսաւորում հորիզոնը: Մուշի գիւղերը պատած էին թանձր ծխով: Ագահ կրակը լափում, այրում էր դէզեր, տներ, կենդանիներ և մարդիկ: Գիշերային այս կասկածելի շփոթութեան միջոց հեռու-հեռու տարածւում էին խուլ հառաչանքներ, դառն ողբ ու կոծեր...

Գիւղերի մէջ յուսահատական, կեանքի և մահան կռիւ էր տեղի ունենում: Մարդիկ ոլոր-մոլոր փողոցներից փախչում, հեւալով պատերը ճանկոտում, վեր էին բարձրանում, վար իջնում և մթութեան մէջ անյայտանում...

Մարդիկ ահ ու սարսափով փախչում էին և բազմամարդիկ նրանց կատաղաբար հալածում: Պատերի տակ, փրատակների մէջ հայ գիւղացիները գետին փուռած արեան լճակի մէջ կեցւում, գալարում և իրենց վերջին շունչն էին սփռում: Նոյն գաղան-մարդիկ յղև կանանց փորերը պատում, դեռ լոյս աշխարհ չ'ենկած անմեղ մանուկներին շարտում էին օդի մէջ և սրբըր դէմ բռնելով՝ կիսում կամ սրի ծայրն էին անցկացնում... Վարժես անարգ մահն այս եղբորայծն գիշերը իւր թևերը տարածել էր ամբողջ դաշտի վրայ և ուզում էր համարձակ թագաւորել:

Բայց ո՞վքեր էին այդ գաղան-մարդիկ, ո՞ւմ էր այն գարշելի, պիղծ ձեռքը, որ առանց բթալու աւերում էր այդ աստածային հոյակապ շէնքը, Մշոյ սիրուն դաշտը:

Մահմետականն էր նա, նրա անարգ ձեռքը: Մահմետական խուժան—այդ ասել է մի նեխան, հոտած մարմին, որից գարշահոտութիւն է բուրում և վարակում իր շուրջը գտնած ամէն բան: Նա աւելի վատ է քան ժանտախտը: Նա չի ընդունում նորոգութիւն, թարմութիւն, այլ միշտ շարունակում է նեխել: Նա միշտ

\*) Ներկայ վէպիկը պատկանում է մեր ընկեր ՊԵՏՕ-ի գրչին,— նա, որ երկար տարիներ, իբրև յեղափոխական, Վասպուրականում գործելով, վանի կուրից յետոյ՝ նահատակեց թիւրք-պարսկական սահմանի վրայ 1896 թվի յունիսին (տես «Իրօչակ», թիւ 22, 1896): Գրական այս փորձը, որ միաժամանակ հեղինակի զգացմունքների գեղուն է, պէտք է համարել կուրի դաշտում ընկած յեղափոխականի հարեւնասիրական մի բողոք, որ անկասկած նոր արձագանք կը գտնի Գարահիսարի լեռան հերոսի գաղափարակիցների սրտում:

ուտում, մաշում է իրեն, բայց աւելի շատ իր թշառ հպատակներին: Գիշերային խուժան-հրոսակները այժմեան մահմետականների պապերն էին, որոնք իրենց գաղանային յատկութիւնը իբրև ժառանգութիւն թողին այժմեան սերունդին էլ:

Եւ այն օրերից մինչև այժմ, այս վայրկեան՝ հայ մանուկը դեռ երերում է մահմետականի սրի ծայրին: Եւ այն օրերից մինչև այժմ, այս վայրկեան՝ հայը խող-խողում է իր հարազատ հողի վրայ և արեան մէջ ծնում... Ուր էք, յանդուգն հայ սրտեր, մի՞թէ դժոխային կեանքը մեզ չհասկացրեց, թէ լաւ է քաջի մահով մեռնել, քան խայտառակ, ամօթ բերող մահով...

### II

Մինչ այս անգութ կոտորածը շարունակւում էր, մինչ հայաշատ գիւղերը լափող բոցերից ճարձատում էին, ն... գիւղում մի անսովոր տեսարան էր պատկերանում:

Գիւղահայն պարզ և ցածրիկ տան բակում մի դեռահաս կին կուրի էր բռնած մահմետականների հետ: Մշեցի Վարինէն էր այդ: Նա այդ ընդհանուր աղէտի ժամանակ ամէն տեղ էր, և տանիքների վրայ, և նեղիկ փողոցներում ու այգիներում, և ճարձատող փլատակների մէջ և գիւղից դուրս: Վարինէն ուր հասնում, խրախուսում, ոգի էր ներշնչում իր համագիւղացիներին, թոյլ և վախկոտներին յանդիմանում էր:

Վասնզի տեղերում նրա մտաղեայ սուր ձայնը հընչում էր, «Ջարկեցէք, մի վախենաք, դիմադրեցէք... Նա ինքը կուռում էր ամէն բանով՝ քարով, փայտով, բայց իր պապենական ժանգոտած սուրն էլ անբաժան էր նրանից: Մահմետականները Վարինէի պատճառով մեծ դիմադրութեան հանդիպեցան: Ար յաջողւում այդ գիւղն ևս ուրիշ գիւղերի նման դիւրութեամբ աւերել ու թալանել: Իրենցից բաւականին մարդիկ ընկան, ստիպւած գաղտնի մեղդ ուղարկեցին մի խումբ ևս օգնութեան կանչելու: Նրանք վերջապէս ճանաչեցին մեղաւորին և աստիճանով կրճատեցին: ամէն տեղ որոնում էին «գլխի կնիքը»:

Ահա Վարինէն երկու այդպիսի ոսոխների է հանդիպում յանկարծակի մի խուլ տեղում:

Նրա գլխի ծածկոցը պղծ էին, հերարձակ էր, նրա թուխ մազերը առատօրէն թափւած էին ուսերի վրայ և ծածկելով վայելուչ թիկունքը, իջնում էին մինչև բոսիկ, սև աչքերը վառւում էին վրէժխնդրութեամբ, և ներդաշնակելով նրա դէմքի կանոնաւոր գծերին, մի առանձին գեղեցկութիւն էին տալիս նրան:

Թշնամիներն ամէն կերպ աշխատում էին ողջ բռնել յրէ կնոջը, բայց հէնց առաջին յարձակման ժամանակ Վարինէն մի այնպիսի ծանր հարած տւեց նրանցից մէկին, որ թիւրքը վայրկենապէս անշնչացած՝ գետին փուռեց: Չայրացաւ, փատողեց ընկերը մի թոյլ կնոջ յանդգնութեան վրայ և մոռացաւ կենդանի բռնելու ամէն ցանկութիւն: Մահառիթ սուրը շողշուղում էր գեղջկուհու գլխին: Մահը մտ էր, նրա շուրջն էր: Սյդ լաւ էր զգում յոգնած կարինէն, բայց այն պաշտելի գաղափարը, թէ քաջի մահով մեռնել և չընկնել պիղծերի ձեռքը, այդ թուլացած, անձար փիճակի մէջ նրան յաղթողի ոգի էր ներշնչում: Թշնամին երկրորդ անգամ և աւելի կատաղի յարձակեց: Գեղջկուհին մի սոսկալի

ձայն արձակեց. նա վիրաւորեցաւ, շփոթեց և ինքնիրեն կորցրեց:

Մի վայրկեան ևս, և նա մահաձայնի գրկում պիտի լինէր. սակայն իսկոյն սթափեց, ուժգին յետ հրեց իրեն բռնող ձեռքերը, վերկացաւ, մի պոստոս գործեց նեղ բակի մէջ և իբրև անապատի կատաղի վագր՝ թռաւ իր թշնամու վրայ: Մահաձայնը մոռցեց և ընկաւ:

Արիւնքամ եղած Կարինէն արդէն անհետացել էր մթութեան մէջ...

Վամաց-կամաց հրդեհները մարում էին: Երբեմն-երբեմն լուում էր մեռնողների և գերածների ցաւալի հառաչները: Տեղ-տեղ խոտերն ու թփերը խշխշում էին և գողունի, ընդհատող ոտնաձայներ էին լուում: Գրանք մահից փախչողներն էին:

Մահաձայնները նոյն հաւատի լեշակեր քիւրդերի հետ բարձում էին իրենց հարուստ աւարը: Նրանք շատ էին շտապում. չլինէ՞ խաւարի որդիքը ամաչում էին պայծառ արեգակից:

Երկինքն այս բոլորը տեսնում էր և քարացած էր. իսկ խոնարհ լուսինը բաւականանում էր տիրութեամբ փետրային ամպերի մէջ սահելու: Եւ իրաւունք ունէին այդ երկու լուս փկաները: Նրանք իրենց պաշտօնը կատարում էին ամենայն սրբութեամբ: Հայր, միայն հայր հաւատարիմ. չէր իւր անձին, գոյութեանը: Մոռացկոտ և շուտ հաշտող հայր վախկոտութեամբ ծախում էր և դեռ ծախում է իր անձը, սիրելի ամուսնուն, զաւակների պատիւը, իր անձեռնմխելի իրաւունքները, և այդ բոլորը միմիայն նրա համար, որ նա վիզը թեքած, գլուխը խոնարհած կուրծքի վրայ, մի քանի օր, մի անորոշ ժամանակ աւելի ապրի, ստորաքարշ սողունի նման քաշկըստի, ամէնքին և ամէն դէպքում խոնարհւի և զիջանի, մինչև որ մաշած, ուժասպառ՝ գրկէ ցուրտ գերեզման...

III

Արշալոյսը բացում էր: Լեռների և ծաղկապատ հովիտների վրայ քնքոյշ քօղի նման ծաւալած մառախուղը բարձրանում էր: Արևելքում կուտակած ամպերը կլանելով արևի առաջին ճառագայթները՝ մոյգ արեան գոյն էին ստացել, որ շատ էր նմանում Մշոյ դաշտի ողբալի տեսարանին:

Ն... գիւղից մի փոքր հեռու, առաւօտեան մշուշի միջից մի սոււր էր երևում: Նա շտապով առաջ էր շարժւում և անդադար ետ ու առաջ նայում: Երբեմն կանգ էր առնում, ահանջ անում և էլի յուզած ու անհանգիստ՝ շարունակում իր ճանապարհը նեղ ձորակով: Վուրձքին սեղմած էր մի փոքր երեխայ: Այդ Կարինէն էր իւր փոքրիկ աղջկայ հետ: Յաջող ընկալ գտնելով իր ետև ձգած տանեակ լոտաններից խոյս տւած՝ փախչում էր: Նա փախչում էր պատուով մեռնելու համար: Թիւրքերի պահանջած օգնութիւնը հասել էր, գիւղացիները վախից այլևս չէին դիմադրել գիւղն աւերել էին բարբարոսները:

Հրոսակապետը խիստ զայրացած՝ խուճերը դուրս ձգեց գիւղի մէջ այգիները և գիւղի շրջակայքը. ամէն տեղ որոնում էին յղե կնոջը՝ և ով ձերբակալէր՝ ողջ պիտի տանէր հրոսակապետի մօտ ու պարգև ստանար: Փախստականն ապաւինում էր իրենց սահմանի մօտակայ լեռները, որոնք պատած էին մացառով:

Հազիւ կէս ժամ էր մնացել բայց նրա ոտքերն այլևս չէին հնազանդում: Ծնկները ծաւում էին: Ամբողջ գիշեր ոտքի վրայ, արիւնքամ, երեխայի ծանրութիւնը և հայածողների սարսափը—այս բոլորը մաշել ուժասպառ էին արել թշուառ փախստականին:

Կարինէն զգուշութեամբ չորս կողմը դիտեց, դուրս եկաւ ձորակից և վայրի մացառների միջից սողալով, փոքրիկ ըլի քարերի մէջ՝ խոտի վրայ յոգնած նստեց: Նա սեղմել էր կրծքին իր փոքրիկ աղջկան, որ յուզած՝ կարծես զգում էր, որ մի վատ բան է կատարւելու...

Կարինէն թախծութեամբ նայում էր չորս կողմը: Մօտից վազում էր՝ քարից քար թռչելով ու փրփրալով՝ իրենց գիւղի առակը:

Գեղջիւհուհու կեանքը մանուկ հասակից կապած էր այդ վճիտ ջրի հետ, որն անցեալից շատ բաներ զարթեցրեց նրա մէջ: Ոտքերի տակ ձգւում էր դաշարով ծածկւած դաշտը, որի մէջտեղը նստած էր իր հայրենի գիւղը: Այնտեղ էր ծնւել և մեծացել նա: Այնտեղ էին իր հայրենի տնակը, ազգականներն ու բարեկամները, գեղեցիկ այգին ու արտերը: Այնտեղ էր վերջապէս իր սիրելու անթաղ դիակը:

Ետևի կողմում տարածւում էին հովաշուհ լեռները: Երևակայութեան մէջ դեռ լսում էր կովերի բառաջը, գառնուկների մայիւնը, յիշում էր թէ ինչպէս ձիաճրխալով ոչխար ու կով էր կթում և առատ իւղ ու պանիր պատրաստում տան համար:

Ծանր աշխատանքից յետոյ, այդ լեռնային վայրերում շատ անգամ մասնակցել էր աղջիկների պարերին ու երգերին, որ միշտ տեղի էր ունենում ամառայ անուշ լուսնկայ գիշերները:

Բոլորը, այս բոլորը մանկական ու երիտասարդական քաղցր յիշողութիւններով կապած էր Կարինէի սրտի հետ մի ամուր կապով: Եւ գուցէ այս ընկալի, մի ժամից՝ այդ բոլորից պիտի զրկէր, սուրբ կապը գազանների ձեռքով պիտի խզէր... Կարինէն այլևս չդիմացաւ և հեկեկաց... Նրա աչքերից դուրս էին թռչում արտասուքի խոշոր կաթիլները և գլորւում ցած: Երկար հեկեկում էր նա իր զաւակի հետ՝ խեղդած ձայնով: Դառն էր այդ կոծը և սիրտ այրող...

Մի փոքր հանգստանալուց յետոյ վերջին անգամ սիրալիր հայեացք ձգեց Կարինէն այնչափ սիրած հայրենիքի վրայ և վերջին հրաժեշտը տւեց:

Մնաք բարով հայրենի տնակ և սիրելուս անթաղ դիակ: Մնաք բարով ոսկէհեր արտեր, ծաղկաւէտ արտներ ու սառնորակ ջրեր: Մնաս բարով, սիրուն Մշոյ դաշտ, իմ խանձարուր, մանկութեանս որրան, և դուք, ո՛վ անմեղ զօհեր...:

Նա դեռ հեծկլտում էր, երբ տեղից վերկացաւ ու երեխային առաւ գիրկը: Բայց դեռ առաջին քայլը չփոխած՝ յանկարծ նա մի սուր ձայն արձակեց ու սկսեց վազել:

Հեռու, ճանապարհի վրայ, բարձրանում էր սինաձև փոշի: Մի խումբ ձիաւորներ սրարշաւ գալիս էին: Կարինէի հետքը բռնւած էր:

IV

Գեղջիւհուհին հեւալով բոկոսն յառաջ էր վազում: Մահաւան տագնապը տիրել էր նրան: Չէր նայում ոչ փշի և ոչ քարի: Ոտքերը պատուտւել էին և արիւն էր հոսում, բայց նա խոտեր բռնելով, քարեր ճանկըն-



4. և Ա. 6 Գրանք, Ար. Համ: 10 Գր.: Բուսանմայլն՝ Ա-  
տարձագործ 11 Գր., Մ. Գ. 6, Ա. Մ. 3, 3. Բ. 3, 8,  
3. Ծ. 1 Գր. — Կրթիչներն՝ Ե. Ե. 3 շիւղան: — Ոմն 1 Գր. — Յ-  
կեղեցիներն՝ 400 Գր. Ընկերներն Ոմն 5 Գր. — Գարեհեղձ Մ. Ե.  
50 Գր. Ոսկանապատներն՝ «Գողթ» խումբ 791 Գր. — Սուլեյկայի  
«Իշանկազան» խումբն 30 Գր. — Ս. Գ. քաղաքն՝ 350 Գր.:  
Լոբնոսի Կոմիտէն 154 Գրանի 50 սանթ., Եղեղեցիներն 265. Գր.  
15, ա. Ենս Գ. Գ. 18 Գր. 45 ա. — Բ. քաղաքն Գ. Ա. Կ-  
միջոցով 117 Գր. 20 ա. — Սուլեյկայի Է. 3. Գ. խումբն 20 Գր. —  
Երասանմանտան մի խումբն 10 Գրանք, — Վերաբերուողն Գ.  
Ար. էն 2 Գր. 50 ա. Գրեյբերգն «Յատա» խումբն 51 Գր. 20 ա. —  
Կ. քաղաքն «Կոմիտէ» խումբն 132 Գր. 50 ա. — Գ. քաղաքն  
Ե. Կ. միջոցով՝ 261 Գր.: 55 ա. — Կարբուրն Մ. էն 17 Գր.  
20 սանթ.: Գումար 4019 Գրանի 30 սանթ.:

**ԳԱՅԻՐԵԻ ԿՈՄԻՏԷՆ**

«Արուսեակ» խումբն ծիսածախի ձեռնարկ սեպտ. ամիս 29 դա-  
նակն ուղէ, Կոկո. — 15, Կոկոսիքն Աշոտ, Վահան, Մսէլք, Շա-  
պուռ, Սանտոն, Կարո 5-ական: «Սարապ» խումբն սեպտ. Կոկո.  
Կոկոս, Մէլուր, Մախո, Փայլակ 30-ական, Շահէնէ (գեղտ. և  
յունար) 10-ական, Զարմար 10, Ես յունարի ամսականը 5: —  
Կոմիտէի ձեռնարկ Աշոտ 50, Արշա 5, Արեւելք 15, Թիւ  
12575 անդրապարէ 10 դահ: Գումար 287 դահեկան ուղէ:

**ՆԱԿԱՅԱՆԳՍՏԻ ԿՈՄԻՏԷՆ**

«Ազատ» խումբն յունարի ամսականներն Ա. Ալթուն 5 առըլի,  
Բամակ 2, Փիլիպանան 1. 50, Գ. Գուման, Օ. Նորասունի, Սի-  
րուհի, Բիշմէ, Զահար, Գիւնի, Մնացորդ, Լայա, Նիզակ, Ժնա-  
խոտ, Մուրատ, Լուսնթագ, Թոշուն, Արմէն մի-մի առըլի, Մար-  
կոս, Ալուր 50-ական կող: Գումար 23 առըլի 50 կողէ:

**ՏԱԳԱՐ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ**

Բրնայի Նարմնիքն 100 դահեկան, Գահրիման 20, Նա-  
րեկապի (մարտ), Հարշ (մարտ), Ս., 3. 30-ական, Վերի Բրնա-  
պետ 105 դահեկան: Գումար 388 դահեկան:

ՌՕՍՏՆԱՆՆՅՈՒ Գեղեկան խումբն (գեղտ. և յուն. ամսական-  
ներ) Գեղորդ Ստեփաննան 10 Գրանք, Վահրիէ 4, Ծ. 4. 1,  
Կահապետ Հորայան 5. 50, օր. 3. Թ. 1 Գր., Բ. Թ. 6 Գր.,  
Գ. Թ. 3, Գ. Գ. Յովակիմ, Ս. Ե., 3. 3. մէկ-մէկ Գրանք: Գումար  
31 Գրանք 50 սանթիւ:

ՄԱԿԵՆԻՍ Կոմիտէն «Շար» շաբաթաց ընկ 222 լի 10  
սանթ., «Արեւելան» խումբն 36, «Իսթիկ» Սիւնի լի. 33,  
«Նրբի» լի. 17, «Ենթում-Գաղիկ» լի. 16, «Սեպուր» լի. 22,

«Հայկակ» լի., «Ալան» 20-ական «Թորգոման» լի. 9. 25, Սիւնի  
ծերունի 7, Տեղա 5 լի: Գումար 407 լի 35 սանթ:

ՍՕՓՆԱՅԻ ննթախոմիտէն Մ. 10 լի, Միւրթիւն 2, Համբո  
1. 50, Մուրատ 1, Ամելի 2, Գազալ 5, Կո 2, Կ. 5, Արմ. 5,  
Գարեհեղձ 4, Նշան 3, «Սերոբ» խումբն 22 լի յուն. փետր.  
և մարտի ամսականները 33, Սիւն 2, Ար. 2, Ա. 1. 50, Բ. 1,  
Խումբ մը 8 լի: Գումար 110 լի:

**ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ**

ՀԻՐԱՅԻՂ Կոմիտէն (սեպտ.-դեկտ. 1899) Ա. Բիւ, Կո.  
Սգ., Յո. Գր., Յով. Կո., Կա. Սար. 8-ական դուր, Յա. Կո.  
6, Յո. Շղ. 1. 25, Կա. Սուկ. 12. 50, Տեղ. Ա. 2, Հանապան 2. 50  
դուր: Գումար 64 դուր 25 սանթ:

ՄԵՆԹՐԱՆ ՊՕԼՍԻ Կոմիտէն (մայիս-դեկտ. 1899) Գումարն,  
Սարման 7 դուր, Զարէ. 2, Ա. Մ. 5. 50, Արամ 6. 50, Վարդո  
1, Մարտիկ 1. 25 դուր: Գումար 30 դուր 25 սանթ:

ՔԱՆԱԲՐՏԻ Կոմիտէն (յուն. և գեղտ. 1899) Գ. Գ. 16. 27  
դուր, Ազիշ 14. 20, Ա. Բ. 13. 10, Ողջ 13. 30, Կայծար 20. 60,  
Հրատ 12. 45: Ապաճ 2. 30 դուր: Գումար 92 դուր 22 սանթ:

ՎԱՅԹՆԱՎՈՐԻ Կոմիտէն (հոկտ.-դեկտ. 1899) Կ. Ս., Գ.  
Մ., Ա. Գ. 2, 5-ական դուր, Կ. 8. Թ. 10, 3. Գ., Խմբակաւ,  
Գ. Մ. մէկ-մէկ-ական դուր: Գումար 29 դուր:

ՈՒՍՏՐԻ Կոմիտէն (յուն. և գեղտ. 1899) Կ. Գ. 11 դուր,  
Թապալոն, Հայկաթոն, Բունցը, Նժնէ 10-ական, Ա. Թիւկաթի,  
Կիւրիցի, Ժամուկ 5-ական, Էթով 7, Ոմն 3, Օրհորդ, Խոհա-  
րար 2-ական, Ան., Մ. Գ., Կ. Կ. մէկ-մէկական, անդամավճար-  
ներէ եւ: Գ. 21. 95 դուր: Գումար 104 դուր 95 սանթ:

ՇԻԿԱԿՈՒ Կոմիտէն (մարտ-դեկտ. 1899) Ժամուկ Հայաս-  
տանի, Կ. Ա. Կ., Գումարն, Ս. Կ., Ս. 3., Բաշքերունի, Բագ-  
րատունի, Վեհանան 5-ական, Գեղամ, Ոմն 2-ական: Մոմթէ,  
Բրնթո 3-ական, Կարո, Սուրէն, Կ. Բիւ, Ազգային մը, Ժերունի  
Սիւն, Նշան, Ժերուն, Ոմն մէկ-մէկական, անդամավճարներէ  
և: Գ. 21. 88 դուր: Գումար 79 դուր 88 սանթ:

ՊՕՄԹՕՆԻ Կոմիտէն (յուն. և գեղտ. 1899) Ա. Լէօ 20  
դուր, Բ. Հազար, Տարք, Է. 8. Մ. 10-ական, Սիւսակ 8, Կայ-  
ճակ 7, Մարթիկ 6, Ա. Բ., Ս. Պոյ., 3. Պալ., Գ. Սաւ., Ն.  
ճէկ, Կ. Կ., Թար. Կո., Գ. Մարգ. 5-ական, Եղայ 2, Օ. Ա.,  
Ապուս, Կ. Գ., Կ. Ուս., Օրհորդ Բ., Ոմն, Ս. Շամ., Գ. Նարգ.,  
Ոմն, Գ. 8. Մ. մէկ-մէկ-ական, 2. Կ. 5, Պասիկ Նասայթ 8,  
անդամավճարներէ և: Գ. 67. 47 դ. Գումար 203 դուր 47 սանթ:

ԼՕՐԵՍԻ Կոմիտէն ինք ստացար է Սիւսակի վահան 5  
դուր, Մորոյ 4, Ապար 3, Անարկ 2. 25, Է. 2, Ժովալ Բ.  
2, Բանդիէ 1. 50, Զուրու, Գամն, 3. Ծ. Գ. Թ., Մ. Գ., Ս.  
Կ., 3. Է. մէկ-մէկ, 3. Գ., Պ., Մ. Ո., Շուշան Բար 50-ական  
սանթ, Գ. Գ. 25 սանթ. Ուստուր 1 դուր: Գումար 30 դուր:

**Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ**

**Գ Ա Ն Տ Օ Ն Ա Կ Ա Ն Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն**

Միւթեան խնդրի մասին մեր հրատարակած «Յաւելածի» առիթով վերջին շաբաթները զանազան տե-  
ղերից (Կիպրոսից, Ամերիկայի զանազան քաղաքներից և Մանչեսթրից) դիմում են մեզ պահանջելով պատու  
ա տ ե ա ն: Մենք չենք սպում. այդ նամակները, որովհետև նոյն մտքով մի նամակ մի ամիս առաջ մեր տպագրիցիք  
առանձին և տարածեցինք «Դրօշակի» № 2-ի հետ: Լեզուի և ուղղագրութեան զանազանութիւնները շատ քիչ  
հիմք են մեզ համար, որպէսզի մեր հրատարակութիւններում տեղ տանք իւրաքանչիւր դիմումի: Սակայն, իպա-  
տասխան այդ դրութիւնների, պարտք ենք համարում յայտնել որ ատենի հարցը պատկանում է «Դաշնակ-  
ցութեան» կամքը արտայայտող մարմինների լիազօրութեան և հետեւաբար «Դրօշակի» խմբագրութիւնը կը հրա-  
տարակի «Դաշնակցութեան» որոշումը, երբ նա կը կայանայ:

Նոյն հարցի վերաբերմամբ «Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան» արած պաշտօնական  
յայտարարութեան առիթով («Մարտ», թիւ 24) ստիպւած ենք կրկնել իգիտութիւն հասարակութեան,  
որ այս դէպքում մենք արդէն տեղեակ լինելով «Դաշնակցութեան» ընդհանուր հայեցակէտերին, բացարձա-  
կապէս կարող ենք յայտնել. — Վերակազմեալ Հնչակեան Կեդրոնը չպիտի ստանայ մեզից իր ուէ դիմումին  
պատասխան, քանի որ մեզ յայտնի է նրա կազմը: Մեր այս պայմանը գոյութիւն ունի 1896 թիւից և ուրեմն  
նորութիւն չէ («Յաւելած», երես 21): Եւ եթէ «Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը»  
ճշմարտութիւնը պարզելու համար մեզ դիմելու կարիք է զգում, բնականաբար նա պէտք է նախ հողայ՝ զրա  
համար հարկաւոր ճանապարհը հարթել: Հակառակ դէպքում մենք աւելի շուտ պատրաստ ենք մեր ընթացքի  
համար դատապարտուել մեր հակառակորդներից և նոյնիսկ Կիպրոսում, Ամերիկայում, Մանչեսթրում, Փարիզում  
և Լոնդոնում ցրւած բոլոր ղեկավարներից, քան ուէ կոմպրոմիսների դիմել:

ԽՄՏԱԳՐՈՒԹԻՒՆ